


## ՆԱԽԱԳԱՐԻ ԹԵԿՆԱԾՈՒ ՐԱՖՖԻ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ «ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՊԵՏՔ Է ՏԵՂԻ ՈՒՆԵՆԱՅ ԸՆՏՐԱԿԱՆ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ»

Հայաստանի նախագահի թեկնածու, «Ժառանգութիւն» կուսակցութեան առաջնորդ Րաֆֆի Յովհաննիսեան համոզմունք յայտնեց, որ յառաջիկայ ընտրութիւններուն հայ ժողովուրդը կը կատարէ յեղափոխութիւն:

«Փետրուարի 18-ին պէտք է տեղի ունենայ Հայաստանի Հանրապետութիւնում ընտրական յեղափոխութիւն, որի միջոցով Հայաստանի ժողովուրդը ջարդելու է իշխանական, ուժային, մաքսային, հարկային այդ համակարգը, որ 20 տարի իշխում է Հայաստանում», - լրագրողներուն հետ հանդիպման ընթացքին յայտարարեց Րաֆֆի Յովհաննիսեան:

Յայտնելով, որ կը չարգէ անխտիր բոլոր թեկնածուներուն եւ յատկապէս Պարոյր Հայրիկեանին ու Հրանդ Բազրատեանին, որոնք կանգնած են մեր պետականութեան ակունքներուն մօտ, Րաֆֆի Յովհաննիսեան ակեցողց, - «Անհրաժեշտ է սակայն, որ իւրաքանչիւր քաղաքացի մասնակցի



Նախագահական թեկնածու Րաֆֆի Յովհաննիսեան

իր խղճի մտօք առաջիկայ ընտրութիւններին, որովհետեւ կեղծ է այն կատեգորիան, որ հիմա տարածում է գտնում, որ կանխորոշուած են այս ընտրութիւնները»:

«Ժառանգութեան» առաջնորդը ընդգծեց, որ չմասնակցելով ընտրութիւններուն, Հայաստանի քաղաքացիները ակամայ կը նպաս-

Շաբ.ք էջ 4

## ԸՆՏՐԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՍԿԱԾ Է ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐՈՒ ԳՐԱՆՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

Յառաջիկայ փետրուար 18-ին կայանալիք Հայաստանի նախագահական ընտրութիւններուն մասնակցելու նպատակով Կեդրոնական Ընտրական Յանձնաժողովի (ԿԸՅ) մօտ գրանցուած 15 թեկնածուներէն 8 հոգի ներկայացուցած են առաջադրման համար անհրաժեշտ բոլոր փաստաթուղթերը, ներառեալ շուրջ 20 հազար տոլարի գրաւը: Անոնք են՝ գործող նախագահ, Հանրապետական կուսակցութեան ղեկավար Սերժ Սարգսեան, ԱԻՄ առաջնորդ Պարոյր Հայրիկեան, «Ազատութիւն» կուսակցութեան առաջնորդ, Հայաստանի նախկին վարչապետ Հրանդ Բազրատեան, «Ժառանգութիւն» կուսակցութեան վարչութեան նախագահ Րաֆֆի Յովհաննիսեան, Ազգային Համաձայնութիւն կուսակցութեան ղեկավար Արամ Յարութիւնեան, «Ռատիօ Հայ»-ի տնօրէն, քաղաքագետ Անդրէաս Ղուկասեան, հասարակական կարգով «Փախստականներու եւ միջազգային իրաւունքի» բարեգործական հասարակական կազմակերպութեան քաղաքական հարցերով խորհրդատու, Լեւոնային Ղարաբաղի նախկին արտաքին գործոց նախարար Արման Մելիքեան եւ գործազուրկ վարդան Սեդրակեան:

Ընտրապայքարէն դուրս մնացած թեկնածուները դիմելով

Կեդրոնական Ընտրական Յանձնաժողով բողոքած են ընտրութիւններուն մասնակցելու համար պահանջուող գումարի մեծութեան կապակցութեամբ: Թեկնածուներէն մի քանին յայտնած են որ, պիտի դիմեն Սահմանադրական Դատարան, գրաւի չափը բողոքարկելու համար:

ԿԸՅ-ի նախագահ Տիգրան Մուկուչեան մամուլին տեղեկացուց, որ ներկայիս ստուգումներ կը կատարուին ճշդելու համար, եթէ ներկայացուած փաստաթուղթերը կը համապատասխանեն Ընտրական Օրէնսգիրքի պահանջներուն:

Միւս կողմէ, նախագահական ընտրութիւններուն հետեւելու համար Հայաստան պիտի ժամանեն եւրոպական կառույցներու 274 դիտորդներ: Յունուար 14-ին պիտի ժամանեն 24 երկար ժամկետով, իսկ փետրուար 15-ին՝ 250 կարճ ժամկետով դիտորդներ: Դիտորդական առաքելութեան մաս կը կազմեն 13 միջազգային մասնագէտներ ու անոնց աշխատանքը Հայաստանի մէջ կը տեւէ 8 շաբաթ:

Ընտրութիւններու յաջորդօրը դիտորդական առաքելութիւնը պիտի հրապարակէ իր աշխատանքի նախնական արդիւնքներու մասին իր առաջին զեկոյցը, իսկ երկու ամիս ետք կը ներկայացուի վերջնական զեկոյցը:

## ԵՐԿՐՈՐԴ ՀԱՅ ԿՆՈՋ ԴԱԺԱՆ ՍՊԱՆՈՒԹԵՆԵՆ ԵՏՔ ՊՈԼՍՈՅ ՀԱՅՈՒԹԻՒՆԸ ՄՏԱՅՈՒՄԸ Է

Պոլսոյ մէջ լոյս տեսնող հայկական «Ակօս» թերթը կը գրէ, որ իսթանպուլահայ Մարիցա Քիւչուքի 2012-ի Դեկտեմբեր 28-ին կատարուած սպանութիւնը թրքական լրատուամիջոցներու ոչ առաջին էջերուն վրայ ներկայացուեցաւ որպէս կատարուած դաժան սպանութիւն: Սակայն հայ համայնքը տեղի ունեցած դէպքի շուրջ առկայ անորոշ մշտնջի պատճառով խիստ անհանգիստ է եւ պատասխանատուներէն պարզաբարբանում կը սպասէ:



մարմինները կամ ոստիկանութիւնը այս հարցին պարզաբանում պէտք է տա՞ց: Կարճ ժամանակուայ մէջ Սամաթիայի մէջ ապրող երկու հայ կնոջ դէմ յարձակումը պատահականութիւն էն էր: Եթէ երկու դէպքերն ալ կապուած են գողութեան հետ, ապա ինչո՞ւ դաժանութիւնները: Եթէ ճիշդ է գողութեան վարկածը եւ կը նշուի, թէ կանանց վրայ եղած զարդերը տարած են, ապա հարց կը յառաջանայ, տուներէն այլ բան գողացած են, թէ՞ գողութեամբ ուղղակի ծածկած են յանցագործութեան իսկական նպատակը:

Ռոբերտ Քոփթաշ իր գրութեան մէջ պատասխանատուներէն այս հարցերու կապակցութեամբ պարզաբանումներ կը պահանջէ, չի շնորհակալութիւնը մէջ նախապէս, ազգային հողի վրայ կատարուած սպանութիւններու չբացայտուած ըլլալու ամօթալի փաստերը, որոնց շարքին 2007-ի Յունուար 19-ին Հրանդ Տիւքի սպանութիւնը եւ 2011-ի Ապրիլ 24-ին Սեւակ Բալըքչի սպանութիւնը:

## ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՍԲ. ԾՆՆԴԵԱՆ ԵՒ ՏՕՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍԲ. ԷԶՄԻԱԾՆՈՒՄ

Յունուարի 6-ին Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցին նշեց մեր Տէր եւ Փրկիչ Յիսուս Քրիստոսի Սուրբ Ծննդեան եւ Աստուածայայտնութեան տօնը, որի բերկրաշատ առիթով համայն հայութեան հոգեւոր կեդրոնում՝ Միածնաէջ Մայր Տաճարում Ս. Պատարագ մատուցեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Մայրապոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Տաճարի զանգերի աւետաբեր դօղանջների ներքոյ հայրապետական շքեղ թատրոն վեհարանից Ամենայն Հայոց Կաթողիկոսին եւ Հայաստանի Հանրապետութեան նախագահ Սերժ Սարգսեանին ամպհովանիով առաջնորդեց Մայր Տաճար: Ամպհովանակիրներն էին՝ «Հայաստանի Հանրապետութիւն» օրաթերթի գլխաւոր խմբագիր Տիգրան Փարմանեանը, երգիչ-երգահան Վահան Արծրունին, Ս. Փարաճանովի տունթանգարանի տնօրէն Զաւէն Սարգսեանը եւ ԱԱ Փիլիսոփայութեան եւ սոցիոլոգիայի ինստիտուտի տնօրէն Գէորգ Պօղոսեանը:

Ս. Պատարագի ընթացքում Նորին Սրբութեանը որպէս առընթերակներ սպասաւորում էին Մայր Աթոռի լուսարարապետ Տ. Յովնան եպիսկոպոս Յակոբեանը եւ Մայր Աթոռի վարչատնտեսական բաժնի տնօրէն Տ. Մուշեղ եպիսկոպոս Պապայեանը:

Ս. Ծննդեան հանդիսաւոր Պատարագին, Ամենայն Հայոց Կաթողիկոսը տօնի առիթով հայրապետական իր պատգամն ուղղեց աշխարհասփիւռ համայն հայութեանը՝ ամէնքին փոխանցելով հրեշտակաբարբառ աւետիսը:

Սբ. Պատարագի աւարտին Ամենայն Հայոց Կաթողիկոսը կատարեց Զրօրհնէքի արարողութիւնը: Այս տարի Մայր Տաճարում Զրօրհնէքի խաչի կնքահայրն էր ակադեմիկոս Սեն Արեւշատեանը:

Սբ. Պատարագի արարողութեանը ներկայ էին ՀՀ Ազգային ժողովի նախագահ Հովիւ Աբրահամեանը, ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսեանը, Գերագոյն Հոգեւոր Խորհրդի անդամներ, կառավարութեան անդամներ, պետական բարձրաստիճան պաշտօնեաներ, Հայաստանում հաւատարմագրուած օտարերկրեայ դիւանագէտներ, կրթութեան, գիտութեան եւ մշակութի ներկայացուցիչներ:

Սբ. Պատարագից յետոյ, Ալեք եւ Մարի Մանուկեան անձատան սրահում տեղի ունեցաւ պաշտօնական ընդունելութիւն:

# ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼԻ ԳԼԽԱՑԱԲԱՆՔԸ

## ՅԱԿՈՒԲԱՂԱԼԵԱՆ

Հայաստանի նախագահի թեկնածու, Ժառանգութիւն կուսակցութեան առաջնորդ Բաֆֆի Յովհաննիսեանն ակնկալում է նախագահի ընտրութեան երկրորդ փուլ: Ուշագրաւ է, որ երկրորդ փուլի մասին խօսում է նաեւ իշխանութիւնը: Օրինակ, ՀՀԿ փոխնախագահ Գալուստ Սահակեանը յայտարարել էր, թէ գործընթացը, ընտրողի տրամադրութիւնը ցոյց կը տայ, թէ քանի փուլով կ'աւարտուի ընտրութիւնը՝ մէկ, թէ երկու:

ՀՀԿ-ականները խօսում են իրենց թեկնածու Սերժ Սարգսեանի բացարձակ առաւելութեան մասին, ու այդ համատեքստում փոքր ինչ տարօրինակ է, երբ նրանք կասկածի տակ են դնում Սերժ Սարգսեանի մէկ փուլով յաղթանակը:

Թուում է, որ ներկայում հենց այդ յաղթանակի համար ամենաչարմար նախադրեալները կան՝ Սերժ Սարգսեանի հիմնական մրցակցային ուժերի հետ քաշուելուց յետոյ, ի տարբերութիւն օրինակ 2008 թուականի: Այն ժամանակ շատ աւելի սուր դիմակայութեան պայմաններում Սերժ Սարգսեանը չգնաց երկրորդ փուլի, էլ ինչու պէտք է գնայ ներկայում, երբ դիմակայութիւնը մեղմ

եանից հենց այդպիսի ընտրութիւն է ակնկալում, եւ այդ մասին յայտարարել են թէ ամերիկացի, թէ եւրոպացի դիւանագէտները:

Բացարձակ, այսպէս ասած 80 տոկոսանոց արդիւնքը Սերժ Սարգսեանի շահից չի բխում: Նա դրանով չունի ունէ մէկին որեւէ բան ապացուցելու խնդիր: Ինչ վերաբերում է ներսին, ապա Սերժ Սարգսեանը հանրութեանը ոչ մի դէպքում չի կարող ապացուցել ոչ միայն 80 տոկոսանոց նախագահ լինելու, այլ ընդհանրապէս նախագահ լինելու հանգամանքը, իսկ քաղաքական ուժերին նա իր իշխանութիւնը ցոյց է տուել՝ նախագահի ընտրութիւնից առաջ ըստ էութեան գրեթէ լիովին մաքրելով իր ճանապարհը: Դրսի կենտրոններին Սերժ Սարգսեանի 80 տոկոսը ոչինչ չի ստելու, քանի որ նրանք շատ աւելի լաւ գիտեն այդ 80 տոկոսի բնույթը, ձեռքբերման կարգը եւ այլն: Աւելին, Սերժ Սարգսեանը եթէ հասել է դրան, ապա առաջին հերթին հենց արտաքին աջակցութեան շնորհիւ:

Ներկայում նա գոնէ մէկ ինքնուրոյն բան պէտք է անի առկայ գործընթացում, եւ այդ բանը կարող է լինել երկրորդ փուլը կամ այսպէս ասած մրցակցային ընտրութիւնը: Դրա համար է, որ արտաքին կենտրոն-

# ԾԱՌՈՒԿՅԱՆԸ ՔՈՉԱՐԵԱՆԻՆ ՅԵՌԱՑՐԵՑ ԲԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

## ՌՈՔԵՐՏ ՏԷՐ-ՍԱՐԳՍԵԱՆ

2013 թուականի նախագահական ընտրութիւնների ամենամեծ ինտրիգներից մէկը երկրորդ նախագահ Ռոքերտ Քոչարեանի մասնակցութեան հնարաւորութիւնն էր: Իրականում «Բարգաւաճ Հայաստանի» նախագահ Գագիկ Մառուկեանի՝ ընտրութիւններում առաջադրուելու-չառաջադրուելու շուրջ ստեղծուած աժիոտաժն այդ ինտրիգի արտայայտութիւնն էր:

Գագիկ Մառուկեանի կամ վարդան Օսկանեանի առաջադրմամբ Ռոքերտ Քոչարեանն ընտրութիւններում ներկայացուած էր լինելու անուղղակիօրէն, սակայն առնուազն ազդելու էր ընտրութիւնների վրայ: Վճռորոշ կը լինէր նրա ազդեցութիւնը, թէ ոչ, այլ հարց է, սակայն անձամբ կամ որ-է ԲՀԿ-ականի առաջադրմամբ նա կը պահպանէր ընթացիկ քաղաքական գարգացումներում ունեցած դերակատարութիւնը:

Գագիկ Մառուկեանի՝ չառաջադրուելու որոշմամբ իրականում լուծուեց Ռոքերտ Քոչարեանին քաղաքականութիւնից գրեթէ ամբողջութեամբ հեռացնելու, նախագահի պաշտօնին վերադառնալու նրա հնարաւորութիւնն առնուազն գրոյական դարձնելու հարցը: Իհարկէ, այսօր էլ հնչում են գնահատականներ, որ առաջիկայ ընտրութիւններում Քոչարեանի կամ Մառուկեանի չառաջադրումը երկրորդ- երրորդ նախագահների միջեւ ձեռք բերուած ինչ-ինչ պայմանաւորութեան թիւերի արդիւնք է, որոնց համաձայն՝ Ս. Սարգսեան՝ նախագահութեան երկրորդ ժամկէտի աւարտից յետոյ իշխանութիւնը փոխանցուելու է Քոչարեանին՝ 2017-2018 թուականի ընտրական գործընթացների արդիւնքում: Բայց դրա հաւանականութիւնն ամէն օրուայ հետ նուազում է:

Որքան էլ ամուր լինեն երկու անձանց, անգամ ընկերական յարաբերութիւններ ունեցող գործիչների պայմանաւորութեան շուրջը, դա հակասում է իշխանութեան տրամաբանութեանը: Ապացոյցն անցած հինգ տարիներն են: 2008 թուականի ընտրութիւններից յետոյ գրեթէ բոլորը համոզուած էին, որ Ռոքերտ Քոչարեանն ամբողջութեամբ պահպանելու է իշխանութեան վրայ ունեցած ազդեցութիւնը, եւ առնուազն 2013 թուականին Ս. Սարգսեանը նրան է վերադարձնելու նախագահի պաշտօնը: Անցած հինգ տարիները, սակայն, ցոյց տուեցին ճիշդ հակառակը:

Քոչարեանը պահպանեց (գուցէ առայժմ) իր ֆինանսական կարողութիւնները, սակայն նրա ազդեցութիւնը քաղաքական ու իշխանական համակարգում հասցուեց նուազագոյնի: Այնպէս որ, 2017-2018 թուականներին «Քոչարեանի վերադարձի» սցենարը, մեղմ ասած, խոցելի է: Դժուար է ասել՝ ի՞նչ փոփոխութիւններ կը լինեն առաջիկայ նախագահական ընտրութիւններից յետոյ եւ դրան յաջորդող ամենակարգաշրջանում:

Անմտու թուական կը լինի կարծել, որ նախագահութեան երկրորդ ժամկէտում Ս. Սարգսեանը

կը կատարի քայլեր՝ իշխանութիւնը Քոչարեանին վերադարձնելու համար: Ճիշդ հակառակը՝ աւելի մեծ է հաւանականութիւնը, որ Սերժ Սարգսեանը պետական կառավարման համակարգից ամբողջութեամբ դուրս կը մղի Ռոքերտ Քոչարեանի հետ թէկուզ անուղղակի առնչութիւն ունեցողներին՝ վերջնական դարձնելով երկրորդ նախագահի՝ «երիտասարդ թոշակառուի» կարգավիճակը:

1998 թուականի իշխանափոխութեանը յաջորդած 10 տարիներին ՀՀ առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանը գրեթէ ամբողջութեամբ կորցրել էր պետական կառավարման համակարգի վրայ ունեցած երբեմնի ազդեցութիւնը: Ռոքերտ Քոչարեանի՝ նախագահի պաշտօնից հեռանալուց յետոյ անցել է հինգ տարի, իշխանական համակարգում դեռեւս կան մարդիկ, ովքեր ցանկանում են նրա վերադարձը եւ պատրաստ են ռիսկի դիմել դրա համար:

Առաջիկայ հինգ տարիներին, սակայն, այդ մարդիկ այլեւս չեն լինի պետական կառավարման համակարգում, եւ 2018 թուականին Ռոքերտ Քոչարեանը կ'ունենայ գրեթէ նոյն ստարտային հնարաւորութիւնները, ինչ Լեւոն Տէր-Պետրոսեանը՝ 2008 թուականին: Չհաշուած, իհարկէ, մեծ, չափազանց մեծ ֆինանսական կարողութիւնները: Եթէ, իհարկէ, մինչ այդ, ինչպէս ժամանակին Լեւոն Չուրբաբեան էր անհանգստանում, իշխանութիւնը սեփականութեան վերջնական վերաբաշխման որոշում չկայացնի:

« 168 ԺԱՄ »

Եթէ Սերժ Սարգսեանը Արեւմուտքին գոնէ այդ հարցում իր կարողունակութիւնը չդրսեւորի, ապա նրա հանդէպ արտաքին կենտրոնների հիասթափութիւնը բաւական մեծ է լինելու, եւ ամենայն հաւանականութեամբ կարող է հանգեցնել Հայաստանում հին ու նոր գործընկերների որոնման

### ասած սուր չէ:

Բայց, որոշիչն ի հարկէ միայն սուր մրցակցութիւնը չէ: Ամէն սուր մրցակցութիւն չէ, որ կարող է հանգուցալուծուել երկրորդ փուլով: Օրինակ, 2003 թուականին Ռոքերտ Քոչարեանը Ստեփան Դեմիրճեանի հետ մրցակցութիւնում գնաց երկրորդ փուլի, դրանում տեսնելով իրավիճակը լիքաթափելու տարբերակը: Երկրորդ փուլում Քոչարեանը կարողացաւ Ստեփան Դեմիրճեանի դէմ համեմատաբար արդիւնաւէտ հակաքարոզչութիւն ծաւալել, ներքաշել նրան ուղիղ հեռուստաբանավէճի մէջ եւ դնել պակասաբար վիճակում, ու արդիւնքում երկրորդ փուլում իրավիճակը մեղմուեց զգալիօրէն:

Բայց 2008 թուականին, երկրորդ փուլը ոչ թէ կը լիքաթափէր իրավիճակը, այլ գուցէ էլ աւելի կը սրէր ու կը լարէր այն, եւ իշխանութիւնը որոշեց, որ այն, ինչ ստիպուած էր լինելու միեւնոյն է անել երկու-երեք շաբաթ անց, անի եւ աւարտի աւելի շուտ՝ առաջին փուլի շրջանաւորում»:

Ներկայում, Սերժ Սարգսեանն ունի իրեն «երկրորդ փուլի» ճոխութիւնը թոյլ տալու հնարաւորութիւն, քանի որ լարումը մեծ չէ, ընտրական գործընթացը ձգելու ռիսկը մեծ չէ: Փոխարէնը, երկրորդ փուլի միջոցով Սերժ Սարգսեանը կը փորձի ստեղծել մրցակցային ընտրութեան տպագրութիւն Արեւմուտքի համար, որը Սերժ Սարգսեանը

ները նրան միաժամանակ օժանդակելով մրցակցային ռիսկերից ապահովագրուելու հարցում, գուցէ հեռաբար պահանջում են մրցակցային ընտրութիւն:

Եթէ Սերժ Սարգսեանը Արեւմուտքին գոնէ այդ հարցում իր կարողունակութիւնը չդրսեւորի, ապա նրա հանդէպ արտաքին կենտրոնների հիասթափութիւնը բաւական մեծ է լինելու, եւ ամենայն հաւանականութեամբ կարող է հանգեցնել Հայաստանում հին ու նոր գործընկերների որոնման:

Բաֆֆի Յովհաննիսեանը հաւանաբար պատկերացնում է այդ իրավիճակն ու փորձում փոխշահաւէտ առաջարկ անել Սերժ Սարգսեանին, դա դիտարկելով նուազագոյն խնդիրը, որ պէտք է լուծել նախագահի ընտրութեանը մասնակցելով:

Ի դէպ, Յովհաննիսեանը Սարգսեանին խորհուրդ է տուել լուրջ վերաբերուել իր նամակներին: Սարգսեանը մինչ այժմ դրանց վերաբերել է անլուրջ, չի էլ պատասխանել, դա թողնելով ՀՀԿ-ական ֆունկցիոններին: Վերջին նամակին օրինակ Յովիկ Աբրահամեանը պատասխանեց: Ըստ երեւոյթին պահանջելով լրջութիւն, Բաֆֆի Յովհաննիսեանը Սերժ Սարգսեանին զգուշացնում է, որ յանկարծ նա մտքով չանցկացնի Յովհաննիսեանին Յովիկ Աբրահամեանի դէմ դուրս բերել երկրորդ փուլ:

« ԼՐԱԳԻՐ »

**ՄԱՍԻՍ ՇԱՐԱԹ-ԱԹԵՐԹ**  
 ՊԱՇՏՏՈՒԹԵՐԹ՝  
 ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏԻԱՆ ՀԱՉԱԿԵԱՆ  
 ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ  
 Արեւմտեան Ամերիկայի Շրջանի  
 ԽՄԲԱԳԻՐ՝  
 SOPEA. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆԵԱՆ  
 ԿԱՐԶԱԿԱՆ ԲԱԺԻՆ  
 ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ  
**MASSIS Weekly**  
 Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA  
 1060 N. Allen Ave.  
 Pasadena, CA 91104  
 Phone: (626) 797-7680  
 Fax: (626) 797-6863  
 E-Mail: massis2@earthlink.net  
 http://www.massisweekly.com  
 (USPS 667-310) (ISSN 0744-334X)  
 Published Weekly  
 Except Two Weeks in August  
 ANNUAL SUBSCRIPTION RATES:  
 USA \$50.00, \$80.00 (First Class)  
 Canada \$125.00 (Air Mail)  
 Overseas \$225.00 (Air Mail).  
 All payments must be made in US funds & Drawn on US banks.  
 Periodicals Postage Paid  
 at Pasadena CA.  
 Please Send Address Change To  
**MASSIS WEEKLY**

ՀԱՅԱՍՏԱՆ

«ԱԶԳԱՅԻՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԻՒՆ»-Ը, ՔԴՄ-Ն ԵՒ ՄԻՄ-Ը ԿԸ ՍԱՏԱՐԵՆ ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆԻՆ

Արտաշէս Գեղամեանի ղեկավարած «Ազգային միաբանութիւն» կուսակցութիւնը, խորով Յարութիւնեանի Քրիստոնեայ- դեմոկրատական միութիւնը (ՔԴՄ) եւ Հայկ Բաբուխանեանի գլխավորած «Սահմանադրական իրաւունք» միութիւնը (ՍԻՄ) առաջիկայ նախագահական ընտրութիւններում սատարելու են գործող նախագահ Սերժ Սարգսեանի թեկնածութիւնը:

Այս որոշումները քաղաքական երեք ուժերի ղեկավարները, ովքեր անցած զարնանը իշխող Հանրապետական կուսակցութեան համամասնական ցուցակով ստացել են պատգամաւորական մանդատներ, միանձնեայ չեն կայացրել:

Ինչպէս «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում ասաց Արտաշէս Գեղամեանը, Սերժ Սարգսեանին սատարելու մասին ինքը յայտարարել է դեռ անցած տարուայ Փետրուարին՝ իր նախաձեռնում գրքի շնորհանդէսում, իսկ վերջին՝ «Եւրասիական միութիւնը անկախ Հայաստանի ապագայի ուղին է» գրքի շնորհանդէսի ժամանակ վերահաստատել է այդ մտադրութիւնը:

ՍԻՄ կուսակցութեան Ներկայացուցիչների խորհուրդը գործող նախագահի թեկնածութիւնը սատարելու որոշումն ընդունել է անցած տարեվերջին՝ հաշուի առնելով, Հայկ Բաբուխանեանի ձեւակերպմամբ՝ «կուսակցութեան անդամների եւ համակիրների հոծ բանակի ցանկութիւնը»:

ՔԴՄ-ն պաշտօնապէս իր տեսակէտը դեռ չի հրապարակել, բայց, ինչպէս «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում ասաց կուսակցութեան նախագահ խորհուրդի Յարութիւնեանը՝ «կուսակցութիւնն իր դիրքորոշումը, անկասկած, կ'արտայայտի»:

«Թեէպէտ, կարծէք թէ, յայտնի է դիրքորոշումը: Եւ ակնյայտ է, որ մեր քաղաքական խորհրդի որոշումը կը լինի, որ առաջիկայ ընտրութիւններում մենք անվերապա կը պաշտպանենք նախագահ Սարգսեանի թեկնածութիւնը», - նշեց նա՝ յաւելելով, թէ որոշումը հիմնադրւած է «Մենք կարող ենք ասել, թէ արդեօք բաւարարում է պայքարն այդ երեւոյթի դէմ, նա արձագանքեց. - «Իհարկէ, կարելի էր մէկ, երկու, հինգ, չգիտեմ քանի օլիգարխ կայ, բոլորի թաթերին խփել եւ այլն: Դուք կարծում էք փոխարէնը մէկ ուրիշը չէ՞ր ծնուելու: Մէկ ուրիշն էր ծնուելու: Պրոբլեմը ոչ թէ այդ անձն է, այլ այդ ինստիտուտը ծնող պատճառների վերացումը: Սա հեշտ գործ է: Մենք կարող ենք ասել, թէ [պետութեան արածը] դեռեւս բաւարար չէ»:

Հայկ Բաբուխանեանի փաստարկմամբ՝ Սերժ Սարգսեանին սատարելու որոշում ՍԻՄ-ն ընդունել է, քանի որ գործող նախագահի ծրագրերն ու գաղափարախօսութիւնն ամբողջութեամբ համընկնում է իրենցի հետ: ՍԻՄ-ը նաեւ ողջունում է Սերժ Սարգսեանի վարած արտաքին քաղաքականութիւնը:

«Երկրի նախագահին յաջողուել է «Փոտեթլային դիւանագիտութեամբ», ֆոտեթլային տերմինով ասեմ՝ Հայաստանը բարձրացնել որպէս բարձրագոյն լիգայի խաղացող», - յայտարարեց Բաբուխանեանը:

«Երկրի նախագահին յաջողուել է «Փոտեթլային դիւանագիտութեամբ», ֆոտեթլային տերմինով ասեմ՝ Հայաստանը բարձրացնել որպէս բարձրագոյն լիգայի խաղացող», - յայտարարեց Բաբուխանեանը:

«Երկրի նախագահին յաջողուել է «Փոտեթլային դիւանագիտութեամբ», ֆոտեթլային տերմինով ասեմ՝ Հայաստանը բարձրացնել որպէս բարձրագոյն լիգայի խաղացող», - յայտարարեց Բաբուխանեանը:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ ԵՆ 44 ԽԱԽՏՈՒՄՆԵՐ

Հայաստանի Պաշտպանության մի կենտրոնի նախագահ Ռուբէն Թորոսեանը Գլխավոր դատախազութիւն եւ ԿԸՅ է ուղարկել հաղորդագրութիւն 44 ընտրախախտումների մասին:

Ըստ Ռուբէն Թորոսեանի՝ դրանք կարող են հսկան ազդեցութիւն ունենալ ՀՀ Նախագահի ընտրութեան արդիւնքների վրայ:

Այդ հաղորդագրութիւնն ուղարկել են նաեւ իրաւասու միջազգային կազմակերպութիւններին, այդ թւում, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ին:

«Եթէ նախորդ ընտրութեան ներկայ փուլում, պետական հսկայական միջոցների հաշուին ՀՀԿ-ի քարոզչութիւնն իրականացում էր ՀՀԿ անդամատուների բաժանման, երկրի տնտեսական ծրագրերի իբր քննարկման եւ այլ «թաքնուած» միջոցառումների միջոցով, ապա ներկայ ընտրութեան ժամանակ, ՀՀ Նախագահի ՀՀԿ առաջադրուած թեկնածու Ս.Սարգսեանի օգտին քարոզչութիւնն իրականացում է պետական ՁԼՄ-ների ողջ հզօրութեամբ:

Ակնյայտ է, որ ընտրութիւնից ընտրութիւն ՀՀԿ-ն օրինախախտումները նոր որակ են ձեռք բերում, հաւանաբար, ոգևորութելով այն հանգամանքից, որ ՀՀ Նախագահի թեկնածուներից ոչ մէկը չի արձագանքում դրանց, ինչպէս նաեւ, համոզուած լինելով, որ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ դիրտորդական առաջնութիւնը նորից անուշադրութեան կը մատնի պետական միջոցների չարահաման իբր «նուրբ» ձեւերը:

Ի դէպ, ներկայ գլխավոր ընտրախախտողները նորից այն պաշտօնատար անձիք են, որոնք ի պաշտօնէ պարտաւոր են պաշտպանել ՀՀ քաղաքացու ընտրական իրաւունքը, մասնաւորապէս՝ Սերժ Սարգսեան, Յովիկ Աբրահամեան, Տիգրան Սարգսեան, Արման Մկրտումեան, Կարէն Անդրէասեան, Ռուբէն Սահակեան, Վիգէն Սարգսեան, Արթուր Բաղդասարեան, Ալեքսան Յարութիւնեան:

Իսկ գաւեշտալին այն է, որ դեռեւս չգրանցուած իր թեկնածութեան քարոզչութիւնն է իրականացնում ՀՀ Նախագահի պաշտօնը գրադեցնող անձը... Ինչը եզակի օրինախախտում է ՀՀ համայնական ընտրութիւններում», - ասուած է յայտարարութեան մէջ:

«ՀԱՅԱՍՏԱՆԸ ՍԿՍԵԼ Է ՇԱՏ ՔԻՉ ՏԱՐԲԵՐՈՒԵԼ ԿԵՂԾ ԴԵՍՈԿՐԱՏԻԱ ՎԱՐՈՂ ԵՐԿՐՆԵՐԻՑ»

Հայաստանում Փետրուարին կայանալիք նախագահական ընտրութիւններից որեւէ ակնկալիք պէտք է ունենալ, քանի որ այդ ընտրութիւններն անգամ չարքային քաղաքացիների համար հետաքրքիր չեն: Քաղաքագէտ Սերգէյ Շաքարեանը նման կերպ գնահատեց գալիք ընտրութիւնները եւ Tert.am-ի հետ զրոյցում նշեց, որ մենք կարող ենք ընդամենը 1% «ֆորս մաժորի» յոյս ունենալ:

«Այսօրուայ դրութեամբ արդէն պաշտօնապէս առաջադրուած մարդկանց ազգանունները համարել շուռ, ճիշդ չի լինի, սա ուղղակի փորձ է ներկայացնել, թէ իբր Հայաստանում հերթական այլընտրանքային ընտրութիւնները են: Բոլորիս համար պարզ է՝ իրական պատկերը մի քիչ շեղուել է», - ասաց նա՝ յաւելելով, որ ընտրութիւնները քիչ թէ լատայլընտրանքային կարող էին լինել նախ այն դէպքում, երբ ԲՀԿ առաջնորդ Գաղիկ Մառուկեանն առաջադրուէր, եւ երկրորդը, որ ստեղծուէր ընդդիմադիր ճամբարը միաւորող միասնական թեկնածու:

Ըստ նրա՝ փաստն այն է, որ այսօրուայ դրութեամբ նախագահական ընտրութիւններում մրցակցութեան միջնորդ չկայ: «Ո՞վ



Քաղաքագէտ Սերգէյ Շաքարեանը

պիտի լինի մրցակից, Հրանդ Բազրատեանը, կամ ինչ-որ գործազուրկ: Դա անյուրջ է, այդ մարդիկ մասնակցում են գործող նախագահի հետ, քանի որ կա՛մ ուղղակի փորձում են գործարքի մէջ մտնել իշխանութեան հետ, կա՛մ ցոյց տալ, որ Հայաստանում դեմոկրատիա է:

Միեւնոյն ժամանակ քաղաքագէտը նշեց, որ ամէն ինչ հնարաւոր է, հնարաւոր է, որ ինչ-որ մէկը ընտրուի 40% ձայնով, եւ օրինակ՝ Ֆրանսիայի վերջին ընտրութիւնները ցոյց տուցին, որ ամէն ինչ հնարաւոր է, սակայն Հայաստանում դա «սուտ բան» է. «Մենք տեսնում ենք, որ պրակտիկորէն Հայաստանը սկսել է շատ քիչ տարբերուել կեղծ դեմոկրատիա վարող երկրներից»:

Պ. ՀԱՅՐԻԿԵԱՆ ԻՐ ԹԵԿՆԱԾՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Գալիք նախագահական ընտրութիւններում ՀՀ նախագահի թեկնածու Պարոյր Հայրիկեանի յաղթանակը, ըստ իրեն, կախուած է այն բանից, թէ որքանով ողջախոսութիւնը Հայաստանում տիրապետող կը դառնայ: «Իսկ յաղթելու մասին խօսք չի կարող լինել, որովհետեւ ես ո՛ւմ պիտի յաղթեմ, նրա՞նց, որոնց ես ուզում եմ օգտակար լինե՞լ: Նրանց ես չեմ յաղթում, օգնում եմ դառնալ իմ գաղափարակիցը», - Tert.am-ի հետ զրոյցում նման տեսակէտ յայտնեց ԱԻՄ նախագահը եւ, որպէս օրինակ, յիշատակեց լեհ աստղագէտ, մաթեմատիկոս, տնտեսագէտ Նիկոլայ Կոպեռնիկոսին, ով տիեզերքի արեգակնակենտրոն կառուցուածքի տեսութեան հեղինակն է: «Կոպեռնիկոսը քանի՞ տոկոս ձայն ստացաւ, բայց նա մինչեւ վերջ գնաց, որովհետեւ վերեւում՝ Աստուած, ներքեւում՝ ճշմարտութիւնը, մնացածը իմ որակի հարցը չէ, մնացածը հանրային ընկալման հարց է», - ասաց նա:

Հայրիկեանի կարծիքով, նախորդ խորհրդարանական ընտրութիւնների խօսքի ազատութիւնը ցոյց է տուել, որ դրանով ինքը կարող է գոնէ այն մարդկանց, ովքեր պատկերացում ունեն ինքնորոշման մասին, հասցնել այն, որ հայ իրականութեան մէջ ինքնորոշման կարեւորագոյն գաղափարի հետ ծանօթացնող մարդուն հիմա նոյնպէս հնարաւորութիւն տան ինքնորոշումը գործող սկզբունք դարձնել: «Մեր պատմութիւնը ցոյց է տուել, որ իմ յաղթանակը եղել է բոլորի յաղթանակը, իմ յաջողութիւնը եղել է բոլորի յաջողութիւնը: Բոլոր գիտակից մարդկանց համար ակնյայտ է իրողութիւնը, որ ունեն ազգային-քաղաքական գործիչ, որը ամենանյութալի պայմաններում կարողացել է հայ ժողովրդի համար կարեւոր գաղափարներ աս-



ՀՀ նախագահի թեկնածու Պարոյր Հայրիկեան

պարէզ իջեցնել, յետոյ դրանք դարձնել ժողովրդի սեփականութիւնը», - ասաց նա՝ նշելով, որ բոլորի համար ակնյայտ է՝ քանի որ ինքն իշխանական լծակների չի տիրապետել, ուրիշների միջոցով իրականացուած իր գաղափարները միշտ չէ, որ լաւագոյն արդիւնաւէտութեամբ են իրականացուել:

Հարցին, թէ արդեօք գալիք նախագահական ընտրութիւնները անիմաստ բնոյթ կունենան, Հայրիկեանը պատասխանեց. «Եթէ ինչ-որ մարդիկ այդպէս են կարծում, ապա դա քարոզչական լաւ կազմակերպուած աշխատանքի դրսեւորում է: Հիմա դուք կարո՞ղ էք ասել ազգային ինչ-որ գաղափար, որը կապուած է Սերժ Սարգսեանի անուան հետ: Չէք կարող: Բայց Հայրիկեանի հետ կապուած կարող էք բազմաթիւ գաղափարներ նշել, որոնք անմիջականօրէն կապուած են Հայրիկեանի անուան հետ»:

Վերջինիս հաւաստմամբ՝ հիմա խօսքի ազատութեան պայմաններում ինքը կարող է մարդկանց իրագեկել, իսկ չափի զգացողութիւնը կորցրած մարդկանց վերադարձնել ճիշդ պատկերացումների դաշտ, եւ քանի որ իր խօսքը արդարութեան մասին է, ամէն մարդ կ'իմանայ իր տեղն ու անելիքը:

# ԼՈՒՐԵՐ

## ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԾԻՔԸ ԲԱՐԵՆՊԱՍՏ ՉԷ ԿԻՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Հայաստանի բնակչության կեսից քիչը՝ 46,75 տոկոսն է կարծում, որ հասարակական կարծիքը բարենպաստ է կին-քաղաքական գործիչների համար: Այս մասին են վկայում «Oxfam» միջազգային հասարակական կազմակերպության կողմից Հայաստանում անցկացրած հարցման արդյունքները:

Միաժամանակ, 7,8 տոկոսը կարծում է, որ հասարակական կարծիքը շատ բացասաբար է տրամադրում կնոջ քաղաքական կարիերայի նկատմամբ: Հարցուածների 85,5 տոկոսի կարծիքով, տղամարդկանց կարիերայի նկատմամբ հասարակական կարծիքը դրական է:

Իսկ առհասարակ 2008-ին, անցկացրած հարցման համաձայն՝ հարցուածների 46,2 տոկոսը կողմ է արտայայտվել «Քաղաքականությունը կնոջ գործ է» կարծրատիպին: Այսպիսով, վերջին տարի-

ներին Հայաստանի հասարակական կարծիքում լուրջ առաջընթաց է գրանցվել, կարծում են «Oxfam»-ում:

Կազմակերպության հետազոտության մեջ նշվում է, որ նախորդ խորհրդարանական ընտրություններում պատգամաւոր է դարձել 12 կին, բայց մեծամասնական ընտրակարգով ոչ մի կին չի ընտրվել: Ներկայ խորհրդարանում կայ 14 կին պատգամաւոր, որոնցից 2-ն ընտրվել են մեծամասնական ընտրակարգով:

Հայաստանի նախորդ խորհրդարանի օրինակով կարելի է նկատել, որ կին պատգամաւորների թիվը առաջացում էր նպաստում «հումանիտական» օրէնքների ընդունմանը, նրանց մօտ քուէարկությունների ժամանակ գերակայում է կուսակցական հրահանգաւորումը:

## «2012-Ը ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՏԵՍԱՆԿԻՆԻՑ ՅԱԶՈՂ ԷՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ»

2012 թուականը արտաքին քաղաքականության տեսանկյունից յաջող էր Հայաստանի համար, NEWS.am-ի թղթակցի հետ զրոյցում ասել է Գլոբալիզացիայի եւ տարածաշրջանային համագործակցության վերլուծական կենտրոնի ղեկավար, քաղաքագետ Ստեփան Գրիգորեանը:

Քաղաքագետի գնահատականով՝ էլ առհասարակ են ամրապնդվել Հայաստանի եւ ԵՄ-ի յարաբերությունները. «Հայաստանի քաղաքացիների համար վիզային ռեժիմի հեշտացման պայմանագիր է ստորագրվել, ինչն ակնյայտ յաջողություն է, քանի որ հազարավոր մարդկանց շահերից է բխում: Սա, անշուշտ, դրական կ'անդրադառնայ Հայաստանի եւ միջազգային հանրության շփումներին»:

Անդրադառնալով դարաբաղեան հարցի կարգաւորման գործընթացին՝ քաղաքագետը նշել է, որ այդ հարցում տեղաշարժեր չեն



Քաղաքագետ Ստեփան Գրիգորեան

եղել: Սակայն հայկական կողմին դրանում մեղադրելն ազնիւ է, քանզի ոչ կառուցողական մօտեցումն Ադրբեյջանն է դրսեւորել», - ընդգծել է փորձագետը՝ յաւելելով, որ միանշանակ յաջողութիւն էր միջազգային հանրութեան կողմից Ռամիլ Սաֆարովի ազատումը դատապարտելը:

## ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԱՆԽԱՏԵՍԵԼԻ ԿԸ ԼԻՆԵՆ

2012 թուականի կարեւորագոյն դրական իրադարձութիւնները Հայաստանում եղել են խորհրդարանական ընտրութիւնները: Այս մասին NEWS.am-ի թղթակցի հետ հարցազրոյցում նշեց Կովկասի ինստիտուտի փոխնախագահ Սերգէյ Մինասեանը:

Փորձագէտի խօսքով՝ խորհրդարանական վերջին ընտրութիւնների կարեւորութիւնն այն է, որ դրանց արդիւնքում չեստխորհրդային Հայաստանում առաջին անգամ Ազգային ժողովում ներկայացրած են երկրի գրեթէ բոլոր ընդդիմական ուժերը: «Դա հանգեցրել է նրան, որ ներքաղաքական գործընթացները այս պահին զար-

գանում են խորհրդարանում, այլ ոչ թէ փողոցում՝ բուլւարային քաղաքականութեան մակարդակով: Եւ այդ առումով խորհրդարանական ընտրութիւնները շատ կարեւոր էին», - ասաց նա:

Փետրուարի 18-ին նշանակուած նախագահական ընտրութիւնների համատեքստում՝ նախընտրական իրադրութեանն անդրադառնալով, փորձագէտը ցաւով նշեց, որ չկայ այն պայքարը, որը կար խորհրդարանական ընտրութիւնների ժամանակ: «Չկայ իրական մրցակցային պայքար եւ, հետեւաբար, նախագահական ընտրութիւնների արդիւնքը կանխատեսելի է», - ասաց Մինասեանը:

## ԹՈՒՐՔԻԱՅԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆՈՒՄ ՎԻՃԵԼ ԵՆ, ԹԵՆ ՈՎ Է ԿՈՏՈՐԵԼ ՀԱՅԵՐԻՆ

Թուրքիայի ազգային մեծ ժողովում տարին սկսուեց կրկին վիճաբանութեամբ, բայց այս անգամ վէճը վերաբերում էր նրան, թէ դարասկզբին ո՞վ է կոտորել հայերին:

Թուրքական Ռատիքալի փոխանցմամբ, Թուրքիայի խորհրդարանի քրդական «Խաղաղութիւն եւ ժողովրդավարութիւն» կուսակցութեան պատգամաւոր Սըրըր Սաքըքն ամբիոնի մօտ ասելով թեան յանցանքի հետ կապուած ելոյթի ժամանակ ասել է. «Ձեր պատմութիւնը կոտորածների պատմութիւն է: Լաւ գիտէք, թէ այսօր պայքարողների պայքերին այն ժամանակ ինչպէս էիք կոտորել»:

Քուրդ պատգամաւորի այս խօսքին պատասխանել է իշխող «Արադարութիւն եւ զարգացում» կուսակցութեան խորհրդարանական

խմբակցութեան փոխնախագահ Նուրեթին Ջանիքին, պնդելով, թէ թուրք ազգի պատմութեան մէջ կոտորած, ցեղասպանութիւն եւ ձուլում բոլորովին չի եղել:

Իսկ «Ազգայնական շարժում» կուսակցութեան պատգամաւոր, Հայոց ցեղասպանութեան ժխտման գործում գաւեշտալի աշխատութիւններով յայտնի Եռուսֆ Հայաչօղլուն դիմել է քուրդ պատգամաւորին՝ ասելով. «Թուրքիայի պատմութեան մէջ կոտորածներ չեն եղել, պատերազմներ են եղել: Այդ դէպքում ինձ անկեղծ ասէք: Ես էլ բոլոր փաստաթղթերը ցոյց կը տամ: Ո՞վ է կոտորել հայերին: Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ ռուսների հետ համագործակցած քուրդ ցեղերից խօսէք»:

## ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԳՈՐԾՈՒՄ Է ՄԱՐԴՈՒ ՕՐԳԱՆՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԱՖԻԱ

«Չենք լուելու»-ին է դիմել Աշտարակի բնակիչ Կարապետ Կարապետեանը՝ ինդերելով բարձրաձայնել իր կնոջ՝ Նունէ Մաղաքեանի հետ կատարուած սարսափելի դէպքի մասին, տեղեկանում ենք:

«Իրադարձութիւնների շղթան ինձ լուրջ մտորումների տեղիք է տալիս, որ Հայաստանում գործում է մարդու օրգանների վաճառքի մաֆիա», - ասել է Կարապետեանը «Չենք լուելու»-ի տեսանիւթում՝ յայտարարելով, թէ բժիշկները Մարգարեան հիւանդանոցում կանխամտածուած կարելի իր կնոջ միջաճորանը, այնուհետեւ տեսական ժամանակ իրենք իրենց անտեղեկի տեղ են դրել՝ իբր չիմանալով միջաճորանի՝ իրենց իսկ կողմից կարուած լինելու մասին:

Երկար ժամանակուայ ընթացքում կարուած լինելով՝ միջաճորանի ֆունկցիոնալ յատկութիւնները խախտուել են, եւ բժիշկները խորհուրդ են տուել հեռացնել երկկամը, որը թէեւ առողջ է, սակայն միջաճորանի՝ շարքից դուրս գալու պատճառով անիմաստ է դառել: Երկկամը հեռացնելուց առաջ Կարապետեանների ընտանիքը պահանջել է օրգան իրենց տրամադրել, ինչի վերաբերեալ հիւանդանոցի հետ գրաւոր համաձայնու-

թիւն կայ: Սակայն վիրահատութիւնից չեստոյ հիւանդանոցը հրաժարուել է տրամադրել երկկամը՝ պատճառաբանելով «փորձաքննութեան» անցկացմամբ:

Կարապետեանի խօսքերով, միջաճորանը «իբր թէ անզգուշօրէն կարելի սկիզբն էր այն շղթայի, որը հետագայում երկկամը հեռացնելու եւ այն վաճառելու հիմք պէտք է դառնար»:

Կարապետեանի խօսքերով, կայ իրար հետ յանցաւոր պայմանաւորուածութիւնների մէջ գտնուող բժիշկների գործողութիւնների անողղակի ապացոյցը. առաջին վիրահատութիւնը ետին թիւով ձեւակերպուել է որպէս պետպատուէր, չնայած ընտանիքը վճարուել է: «Այդ պետպատուէրը նրանք գողացել են մի ընչազուրկ ընտանիքից, իսկ մնացած երկու վիրահատութիւնների գումարն էլ բժիշկները խոստացան փոխհատուցել առձեռն: «Ուրիշ ի՞նչ նպատակ դա կարող էր հետապնդել, եթէ ոչ մեզ լրեցնելն ու մեր աչքերում փորձել լաւամարդ դառնալը», - տեսանիւթում ասում է Կարապետեանը՝ ներկայացնելով նաեւ, թէ ինչ պատնէշների է բախուել իրաւապահ եւ դատական մարմիններում:

## ՎՐԱՑ ՊԱՏՐԻԱՐՔԸ ՂԱՐԱԲՂԻ ՄԱՍԻՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ ՉԷ ԿԱՏԱՐԱԾ

Վրաց ուղղափառ եկեղեցուց Պատրիարքարանը հերքած է ատրպէյճանական լրատուամիջոցներու հաղորդագրութիւնը Լեռնային Ղարաբաղի շուրջ Համայն Վրաստանի կաթողիկոս-պատրիարք Իլիա երկրորդի յայտարարութեան վերաբերեալ:

Վրաց եկեղեցուց Պատրիարքարանի արտաքին կապերու բաժանմունքի ղեկավարը հայկական լրատուամիջոցներուն ըսած է, որ Իլիա երկրորդը նման յայտարարութիւն չէ կատարած, եւ այդ հաղորդումը չի համապատասխանել իրականութեան:

Ատրպէյճանական լրատուամիջոցները հաղորդած էին, որ Կովկասի մահաբեռնակներու վարչութեան նախագահ Ալլահշուքիւր Փաշազատէի հետ հանդիպման ժամանակ Իլիա երկրորդը, յայտարարած է. - «Լեռնային Ղարաբաղը պատկանած է եւ պիտի պատկանի Ատրպէյճանին»:

## ԸՆՏՐԱԿԱՆ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ

Շաբաւազուած էջ 1-էն

տեն, որ գործող իշխանութիւնները վերարտադրուելին: «Պատճառ պէտք է լինի, որ մեր ցանկացած թեկնածուն այս անգամ չի մասնակցում: Թէեւ ես ինքնառաջադրուած եմ, «Ժառանգութիւնը» առաջին անգամն է մասնակցում: Հինգ տարի առաջ հնարաւորութիւն չուներեցանք, տասը տարի առաջ չուներեցանք, բայց դա որեւէ խոչընդոտ չէր, որ մենք զօրակցէինք այս կամ այն հասարակական ընդդիմադիր ուժին: Լուծումը տեսանք մեզանից վեր, մեր եսը յաղթահարեցինք»:

«Ժառանգութեան» առաջնորդը նաեւ կոչ րբաւ Սերժ Սարգսեան

նին փետրուարի 18-ին առաջ անհրաժեշտ պայմաններ ստեղծել ազատ ու արդար ընտրութիւններ անցկացնելու համար, պետական տարբեր հաստատութիւններու եւ շէնքերու վրայէն հանել ՀՀԿ-ի տարբերանշանները, գրասենեակները: Այսուհանդերձ, Բաֆֆի Յովհաննիսեան ընդգծեց, որ մեծ յառաջընթաց կայ լրատուական դաշտէն ներս: «Թէեւ ամբողջական չէ լրատուական դաշտի մատչելիութիւնը, մեծ առաջընթաց կայ անցեալի համեմատութեամբ, եւ թեկնածուները՝ ընդդիմադիր հասարակական, քաղաքացիական, այլընտանքային, կարող են նաեւ իրենց տեսակէտը, իրենց խօսքը ասել», - մանրամասնեց «Ժառանգութեան» առաջնորդը:

# Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՍՈՒՐԲ ԾՆՆԴԵԱՆ ՊԱՏԳԱՍԸ

«Ահա կոյսն յղացի եւ ծնցի որդի, եւ կոչեսցեն զանունն նորա Էմմանուէլ, որ թարգմանի՝ ընդ մեզ Աստուած» (Մատթ. Ա. 23, Եսայի Է. 14):



Սիրելի հաւատաւոր ժողովուրդ,  
Հոգու անհուն ուրախութեամբ աչսօր օրհնաբանում եւ փառաբանում ենք մեր Տէր եւ Փրկիչ Յիսուս Քրիստոսի Սուրբ Ծնունդն ու Աստուածայանութիւնը՝ միմեանց փոխանցելով ողջոյնը. «Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ, ձեզ եւ մեզ մեծ աւետիս»:

Ի լրումն ժամանակի իրականացաւ Եսայի մարգարէի խօսքը, թէ «Ահա կոյսը պիտի յղիանայ եւ մի որդի պիտի ծնի, եւ Նրան պիտի կոչեն Էմմանուէլ, որ նշանակում է Աստուած մեզ հետ»:

Երկնքի անհասանելի բարձունքներէ մարդասէր Տէրը խոնարհուեց եւ որպէս մանուկ ծնունդով քարոզում՝ աղբարացնելու իրեն, որպէսզի մեզ հարստացնի հոգեւոր բարիքներով: Պօղոս առաքելն ասում է. «Գիտէ՞ք շնորհները մեր Տէր Յիսուս Քրիստոսի, որ ձեզ համար աղքատացաւ, Նա, որ հարուստ էր, որպէսզի դուք Նրա աղքատութեամբ հարստանաք» (Բ կորնթ. Ը 9): Աստուած մարդացաւ, որպէսզի Աստծոյ պատկերով ստեղծուած մարդը ճանաչի իր Արարչին, Նրա կամքը, հարստանայ հաւատքով, Աստծոյ խօսքով, հարստանայ աստուածահաճոյ կեանքի փափաքով ու փութաջանութեամբ եւ փրկութեան արժանացած՝ ժառանգի յաւիտենական կեանքը: Արդարեւ, ոչինչ չի կարող համեմատուել այդ հարստութեան՝ Աստծոյ արքայութեան մէջ յաւիտենական կեանք ունենալու շնորհի հետ, որ բերեց մեզ Փրկիչ մեր Տէրը՝ Յիսուս Քրիստոս՝ «Մարդու Որդին, որ երկնքից էր» (Յովհ. Գ 13):

Փառքի ու զօրութիւնները անմերձենալի Տէրը մանկացել, աշխարհ է եկել, եւ իւրաքանչիւրը կարող է համարձակաբար մօտենալ ու երկրպագել Նրան հովիւների ու մոզերի օրինակով, ովքեր ճանաչեցին Նրան եւ իրենց ընծաները բերեցին քարայրում մտաւոր մէջ դրուած Փրկիչ մանկանը: Այսօր, սիրելի հաւատաւոր ժողովուրդ, մենք ենք երկրպագում մանուկ Յիսուսի սնարի առջեւ, բայց ի՞նչ ընծաներ ունենք, որ մատուցենք մեր նորածին Փրկիչին: Նիւթական հարուստ պարգեւներ չէ, որ սպասում է Տէրը: Պատուական պարգեւը Փրկիչի համար քրիստոնեան ինքն է, ով մաքուր սրտով ընդունել է «Աստուած մեզ հետ է» մարգարէաբարբառ աւետիսը եւ ջանում է կեանքի ամէն մի օրը ապրել

աստուածային կամքի համաձայն, լի առ Աստուած հաւատքով, այլոց հանդէպ սիրով, Փրկիչի հետ հոգեւոր նորոգութեամբ: Փրկիչի շնորհներով վերածնունդ մարդը վերափոխում է կեանքը՝ այն առաջնորդելով միշտ դէպի բարին, աւելի լաւն ու կատարեալը: Տիրոջ ներկայութեան եւ Նրա ողորմութեան անստուեր շողերի առջեւ, ինչպէս ասում է Սուրբ Գրիգոր Նարեկացին, հալչում են մեղքերը, ողջանում են վէրքերը, վերանում են ապականութիւնները, նահանջում են տիրութիւններն ու հեծութիւնները, փախչում է խաւարը, եւ տիրում է ամենախնամ թագաւորութիւնը Բարեբար Աստծոյ (Մատեան ողբերգ. Բան 10Ա): Այսօր եւ մինչեւ մեր ժամանակների վախճանը, իր խոստման համաձայն, մարդացեալ Աստուած մեզ հետ է (Մատթ. ԻԸ 20). մեզ հետ է փրկութեան իր շնորհով, իր սքանչելագործ մարդասիրութեամբ: Բայց արդեօ՞ք մենք Աստծոյ հետ ենք եւ արդեօ՞ք աշխարհն ընթանում է այն ճանապարհով, որ ուղեւէջք Քրիստոս:

Մարդկութեան, նաեւ մեր կեանքը, սիրելի բարեպաշտ ժողովուրդ, լի է տարաբնոյթ մարտահրաւէրներով, տազնապներով ու հոգսերով՝ ընկերային, տնտեսական հիմնահարցեր, ազգամիջեան եւ միջկրօնական խնդիրներ ու հակամարտութիւններ, կարիք, անձնական շահի մոլուցք, զրկուածների անտեսում, արդարութեան, մարդասիրութեան պակաս եւ այլ արատներ, որոնք հետեւանք են Աստծուց հեռանալու ընթացքների: Մարդը աշխարհի իրականութեան առջեւ յաճախ կարծում է, որ կեանքի բարելաւումը, հասարակութեան բարօրութիւնը հասանելի է յատկապէս նիւթականի առատութեամբ: Մինչդեռ, եթէ մարդկանց հոգում չկայ Աստուած, նիւթականը միայն բաժանում է մարդկանց, ցամաքեցնում կեանքի ուրախութիւնն ու երջանկութիւնը: Ունեւորն ապրում է անհանգստութեան մէջ, չունեւորը՝ նեղատուութեան, ընդհանուր հասարակութիւնը՝ օտարացման: Յանուն նիւթականի են մարդիկ հնարներ փնտռում կողոպտելու, զրկելու, նուաստացնելու: Յանուն նիւթականի են օրէնքներ խախտում, պաշտօն չարաչափում, իրաւունք ոտնահարում, միմեանց կործանում: Յանուն նիւթականի, աւաղ, երբեմն նաեւ՝ Աստծոյ անունով՝ ընդդէմ Աստծոյ: Այն ինչ ծնունդ է առնում

յանուն Աստծոյ, բարիք է մարդկանց համար, միսթարութիւն ու խնդութիւն: Աստծոյ հետ մարդու համար գործում են կեանքի այլ չափանիշներ, գոյութեան իմաստի այլ սկզբունքներ ու արժէքներ՝ «Սէր՝ առանց կեղծիքի. ատելով չարը՝ ընթանալ բարու յետեւից. եղբայրասիրութեան մէջ՝ միմեանց հանդէպ լինել զթասիրտ. պատիւ տալու մէջ՝ միմեանց գերազանցել» (Հռոմ. ԺԲ 9-10): Աստծոյ հետ պաշտօնը ծառայութիւն է, մարդկային ունակութիւններն ու կարողութիւնները՝ աղբիւր բարիքի, երկրի շէնացման, կեանքի բարօրութեան:

Սուրբ Ծննդեան խորհրդով, սիրելիներ, հանապազ շնորհն ունենք Քրիստոսի հետ բարձրանալու պայծառակերպութեան լեռը, Տիրոջ ներկայութեամբ ապրելու աստուածահաճոյ հոգեւէն միջավայրում եւ մեր ընթացքը հաստատուն պահելու Աստծոյ շաւիղներում բարոյական, ճշմարիտ արժէքների վրայ: Սուրբ Գրիգոր մեզ խրատում է, որ Աստծոյ հետ ընթանալը փրկում է փորձութիւններից, բազմացնում բարիքները եւ յաղթանակներ շնորհում երկնային զօրութեամբ: Մեր պատմութիւնն իսկ վկայում է, որ Փրկիչին հաւատարմութեամբ է մեր ժողովուրդը կերտել իր ստեղծագործ կեանքի յաղթանակները եւ մշակոյթի վերելքները: Մեր Տիրոջ հետ ենք դիմակայել փորձութիւններին, վերհանել աւերներից, վերապրել ցեղասպանութիւն: Մեր Տիրոջ զօրութեամբ Սփիւռքում վերընձիւղուել ենք ու պահպանել մեր ինքնութիւնը, աշխարհասփիւռ միանականութեամբ վերահաստատել մեր ազատ պետականութիւնը, մշտապէս վառ պահել տեսիլքը մեր աւետեաց երկրի, այլեւ՝ հաւատը, որ Տէրը համախմբելու է մեզ մեր Հայրենիքում: Այսօր «Աստուած մեզ հետ է» աւետիսով չլուսավառ ու քաջալեր՝ խոնարհուենք մարդացեալ Փրկիչի սնարի առջեւ՝ ջերմանալու Նրա սիրով, ընդունելու Նրա շնորհներն ու օրհնութիւնները, որպէսզի ի Հայրենիս եւ ի Սփիւռս բարեփոխենք ու զօրացնենք մեր կեանքը, իրագործենք մեր ազգային նպատակները, կերտենք մեր ժողովրդի բարօր ու երջանիկ, լուսաւոր գալիքը եւ յաւետ մնանք Աստծոյ հաւատարիմ ժողովուրդ:

Այս հայցն ու մաղթանքը մեր շուրթերին՝ Սուրբ Ծննդեան աւետիսով եւ եղբայրական սիրով ողջունում ենք Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու Նուիրապետական

Աթոռների Գահակալներին՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսին» կոստանդնուպոլի Հայոց Պատրիարք Ամենապատիւ Տ. Մեսրոպ Արքեպիսկոպոս Մութաֆեանին» Երոստաղէմի Հայոց Պատրիարքական Տեղապահ Գերաշնորհ Տ. Արիս արքեպիսկոպոս Ծիրվանեանին, Քոյր Եկեղեցիների հոգեւոր Պետերին եւ մեր Եկեղեցու ողջ հոգեւոր դասին եւ հայցում Տիրոջ բիւր շնորհներն ու զօրակցութիւնը քրիստոսապատուէր առաքելութեան մէջ:

Տիրոջ Ծննդեան տօնի բարեմաղթանքներով ողջունում ենք Սրբազան Պատարագի արարողութեանը ներկայ Հայաստանի Հանրապետութեան Նախագահ Տիար Սերժ Սարգսեանին» Մեր ողջոյնն ենք յղում Լեւոնային Ղարաբաղի Հանրապետութեան Նախագահ Տիար Բակո Սահակեանին եւ հայոց պետական ողջ աւագանուն՝ հայցելով ազգաշէն ու հայրենաշէն գործոց յաջողութիւններ Տիրոջ երկնառաք օրհնութեան ներքոյ: Ողջունում ենք Հայաստանում հաւատարմագրուած դիւանագիտական առաքելութիւնների դեկալարներին ու ներկայացուցիչներին՝ մաղթելով, որ նրանց արգասալի ջանքերով ու մշտանորոգ ձեռքբերումներով միշտ բարեգարգուեն մեր երկրների եւ ժողովուրդների բարեկամութիւնն ու համագործակցութիւնը:

Հայրապետական Մեր սէրն ու օրհնութիւնն ենք բերում սիրեցեալ մեր ժողովրդին ի Հայրենիս եւ ի Սփիւռս: Աղօթք ենք բարձրացնում, որ մարդացեալ Փրկիչ սիրոյ, խաղաղութեան եւ համերաշխութեան շնորհները հանապազ ճառագեն աշխարհում, ի մասնաւորի հակամարտութեան մէջ գտնուող երկրներում, յատկապէս պատերազմական իրավիճակում յայտնուած Սիրիայում եւ այնտեղ դժուարութիւններ ու նեղութիւններ դիմագրաւող մեր եղբայրների ու քոյրերի կեանքում: Թող մարդկանց հոգիներում մշտապէս արձագանք գտնի Սուրբ Ծննդեան «յերկիր խաղաղութիւն եւ ի մարդիկ հաճութիւն» պատգամը եւ ամբարանող Աստծոյ հետ ընթանալու կամքը: Թող Տէրն իր Սուրբ Աջի հովանու ներքոյ խաղաղ ու ապահով պահպանի հայրենի մեր երկիրը» պայծառ ու անասան՝ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին եւ օրհնի աշխարհասփիւռ ազգս հայոց այժմ եւ միշտ եւ յաւիտեան. ամէն:

ՔՐԻՍՏՈՍ ՄՆԱԻ ԵՒ ՅԱՅՏՆԵՑՄԻ  
Ձեզ եւ Մեզ Մեծ ԱՒԵՏԻՍ

**ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ**  
**ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՈՆ**

Yes, I wish to subscribe to Massis Weekly  
Enclosed a check for (one year)  
\* \$50,00 for USA  
\* \$60,00 (second class), \$ 75,00 (Air Mail) for Canada.  
\* \$85,00 (second class), \$ 125,00 (Air Mail) Overseas.

Name: -----  
Address: -----  
City: ----- State:----- Zip Code:-----  
Country: -----  
Tel :----- Fax :-----

# Ս. Դ. ՀՆՁԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ 125-ԱՄԵԱԿ ԱՆԴՐԱՆԻԿ ԵՐԷՑԵԱՆ (ԴԵՐՃԱՆՑԻ ԱՆԴՐԱՆԻԿ)



## ՏՈՒԹՅՈՒՆ ԵՂԻԿ ՃԵՐԷՑԵԱՆ

Հայրենիքի սահմանները կեանքով պաշտպանելու Հնչակեան հաւատաւորներէն մէկը կ'ըլլայ նաեւ Անդրանիկ Երէցեան:

Ա. Երէցեան ծնած է Դերձան, 1893-ին: Պատանի տարիքին կը մասնակցի ծննդավայրի յեղափոխական շարժումներուն, որուն պատճառով կը հետապնդուի եւ փախստական կ'անցնի Ռուսաստան: Հոն, Ա. Երէցեան կը միանայ

Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան եւ կը տանի կազմակերպչական գործունէութիւն:

Համաշխարհային Ա. Պատերազմի սկիզբին, աշխոյժ ձեւով կը մասնակցի կամաւորագրութեան աշխատանքներուն: Ինք եւս, իր կողմէ իսկ հաւաքագրուած կամաւորական խումբի մը գլուխը անցած, կը մեկնի կովկասեան ռազմաճակատ: Յաղթահարելէ ետք անցազրային, տնտեսական եւ այլ բնոյթի դժուարութիւններ, Ռուսաստանէն կամաւորներու Ա. խումբը՝ 106 կամաւոր կը հասնի Թիֆլիս եւ անոր մեծ մասը Ա. Երէցեանի գլխաւորութեամբ կը միանայ Հնչակեան Կուսակցութեան կողմէ կազմաւորուած կամաւորական Չ. գունդին ու անոր հետ կը տեղակայուի Կարս: Մարտունակութիւնը եւ գինավարժութիւններէ ետք, իր նուիրումին, հմտութեան եւ կամաւորներու կողմէ վայելած յարգանքին պատճառով Ա. Երէցեան կը նշանակուի կամաւորական Չ. գունդի 3-րդ հարիւրակին հարիւրապետ (1):

Կը մասնակցի Չ. գունդին մղած բոլոր կռիւներուն ու իր ցուցաբերած քաջութեան համար ռուսական բանակի հրամանատարութեան կողմէ կը պարգեւատրուի գինուորական շքանշաններով:

Իսկ իր ընկերները գինք կը կոչեն «Փոքր Անդրանիկ»՝ առ ի համեմատութիւն գորավար Անդրանիկին:

Այդ օրերուն, Ռուսաստանի շրջանի հնչակեան պատասխանատուներէն Արամ Թորոսեան կ'այցեցելէ Անդրկովկաս ու իր այցելութիւններու շարքին կը հանդիպի նաեւ ռուսաստանաց կամաւորներուն՝ որոնց մէջ Անդրանիկ Երէցեան: Իր ունեցած հանդիպումը ան կը նկարագրէ այսպէս. - «Չպիտի մոռնամ մեր հանդիպումը, ուր ուրախ տրամադրութիւններով մը իրաւամբ



Անդրանիկ Երէցեան կամաւորական Չ. գունդի խումբ մը գինակիցներով:

կը հպարտանար: Մենք լսելով իր գործերու պատմութիւնը իր ընկերներէն, թէեւ հպարտութիւն կը զգայինք, բայց եւ կարծես կանխատեսելով սեւ չարիքը՝ իրեն զգուշութիւն կը յանձնարարէինք, ան ժպտալով մեզ կը պատասխանէր. «Ընկեր ճան, հայրենիքի պաշտպանութեան եւ ազատագրման համար պատնէշի վրայ կուրծքէն գնդակ ուտողը աւելի շատ ու աւելի իբր մարդ կ'ապրի քան հաճոյքներու հոտած մթնոլորտին մէջ իր կեանքը քաշկուտողը» (2):

Շատ չ'անցնիր եւ Ա. Երէցեան հերոսի մահով իր արիւնը կը խառնէ հայրենիքի հողին:

Ա. Երէցեանի մարմինը կը փոխադրուի Կարս, ուր տեղի կ'ունենայ գինուորական թաղում: Յետմահու եւս կը պարգեւատրուի գինուորական շքանշանով:

Ա. Երէցեանի մահը յառաջ կը բերէ ընդհանուր սուգ՝ յատկապէս իր ընկերներուն ու գինակիցներուն մօտ: Այդ տրամադրութիւններուն արտայայտիչը ըլլալով, Թիֆլիսի կուսակցական օրկան «Գաղափար», մահախօսական եւ ցաւակցական յօդուածներու շարք մը կը տպէ Ա. Երէցեանի մասին, որոնցմէ կատարուած քաղուածք մը լոյս կը սփռէ Անդրանիկ Երէցեան հայրենասէր մարդուն եւ իր գալիս գինուորականին կենաքին ու գործունէութեան վրայ:

\*\*\*  
«Կովկասեան ռազմաբեմից - Ա. հայկական բատալիոնից նախկին 6-րդ կամաւորական գունդ»

պրապորուշչիկ Բարխադարեանն ուղղել է հետեւեալ բօթաբեր հեռագիրը. «Հերոսական մահով ինկաւ Անդրանիկ Երէցեան»:

Այսպէս, ուրեմն մի գոհ եւս այն հարիւրաւոր հազարաւոր զոհերին, որոնք նուէր բերուեցին թիւրքահայ ճնշուած ժողովրդի արդար դատին: Մէկն եւս այն անկեղծ եւ անձուէր գործիչներէց, որոնք անխաղախ, անզուսպ սիրով նուիրուեցին իրենց հայրենակիցների տառապանքները թեթեւացնելու, բռնաբարուած իրաւունքները վերականգնելու վեհ սկզբունքին:

Չկայ այլեւս Դերձանցի Անդրանիկը, որ նիւթական աներեւակայելի գոհաբերութիւններով, հեռաւոր Ռուսաստանից սլացաւ Կովկաս, մտաւ հայկական 6-րդ կամաւորական գունդը եւ իբրեւ հնչակեան քաջարի մարտիկ՝ վաշտապետ կարգուեց նոյն գնդում, լիակատար վստահութիւն եւ յարգանք վայելելով այդ գնդի գանազան ժամանակներում նշանակուած բոլոր հրամանատարներէց:

Էրզրումի առժամ ժամանակ, Մամիսթունի կռիւներում անվեհեր մարտիկի հուշակ ստացած՝ նա միաժամանակ հազարաւոր փախստականներ պատսպարելով արժանացաւ վերակազմուած 6-րդ գնդի նոր հրամանատարի վստահութեան, որ ապա, իբրեւ աներկիւղ խուզարկու, յանդուգն մարտնչող, հայ ժողովրդի դարաւոր թշնամու ասկերի դաւադրական մահացող գնդակին զոհ դառնալու:

Մակայն ոչինչ... հերոսի անակն-

կալ մահը նրա անմոռաց եւ նուիրական յիշատակն անջնջելի կը պահուեն իւր հազարաւոր ընկերների եւ գաղափարակիցների վշտացեալ սրտերում» (3):

\*\*\*  
«Խմբագրութիւնս բազմաթիւ հեռագիրներով եւ նամակներով ցաւակցական եւ դրուատական գնահատումներ է ստանում հերոսական մահով ընկած Անդրանիկ Երէցեանի մասին: Մենք միանգամայն աւելորդ ենք համարում այդպիսի ցաւակցական գրութիւնների տպագրութիւնը: Բազմազան ցաւակցական արտայայտութիւնները չեն իսկական հերոսներին անմահացնողը, այլ այն գործունէութիւնը, որ նոքա ունեցել են անցեալում եւ այն անձուէրութիւնը, որով զոհաբերում են նրանք իրենց երիտասարդ կեանքը՝ թշուառ հայ ժողովրդի փրկութեան համար: Անդրանիկ Երէցեանն անձուէր գործիչ էր եւ հերոսական մահը գալիս է անմահացնելու նրան: Փառքն ինքն է, որ վազում է հերոսի ետեւից, հարկ չկայ արհեստական միջոցների դիմելու» (4):

\*\*\*  
Սարիղամիշ, 28 Յունիսի «Բօթաբերի դժբախտ դերի մէջ դրուած ըլլալով, կու գամ հաղորդել Ձեզ նոր անփոխարինելի կորուստ մը եւս: Կարծես հայերուս վիճակուած է մշտապէս կորուստներու, մահերու մասին միայն ճառել: Անդրանիկին բօթն է, որ գուժկան դառնալով կը հաղորդեմ Ձեզ: Ան ալ ընկաւ, շատերու ետեւէն ան ալ գնաց, գնաց խտացնելու մեր այնչափ անթիւ, անհամար նահատակներուն շարքը: Եւ քանի՜ քանիներն այսպէս: Սակայն, սա քաջին մահը բոլորովին այլ հանգամանքներու եւ պարագաներու մէջ տեղի ունեցաւ, մինչ կը պատրաստուէր աւելի բուռն եւ եռանդաւոր կարեւոր ձեռնարկի մը:

Երկու տարուց ի վեր հայկական Չ. կամաւորական գնդի վաշտապետ եւ հրամանատար գինուորական խուզարկու հայկական խմբի, արդէն բազմիցս ցոյց տուած էր իւր հերոսական անվեհերութիւնն եւ անձուէրութիւնը, երբ կը վերակազմուի հայկական առաջին բատալիոնն, որոյ մէջ կը մտնայ եւ ինքն:

Շար.ը էջ 17

**Bedros S. Maronian**  
818/500-9585

**Siamanto B. Maronian**  
818/269-0909

**SERVING THE COMMUNITY SINCE 1975**  
More locations and more ways to service your insurance and financial needs

<p>6300 Wilshire Blvd. Suite 1900 Los Angeles, CA 90048</p> <ul style="list-style-type: none"> <li>• Life Insurance</li> <li>• Health Insurance</li> <li>• Group &amp; Individual</li> <li>• Long Term Care</li> <li>• Disability</li> </ul>	<p>805 East Broadway Glendale, CA 91205</p> <ul style="list-style-type: none"> <li>• Estate Planning</li> <li>• Will &amp; Living Trust</li> <li>• Full Annual Review</li> <li>• Mortgage Protection</li> <li>• College Planning</li> </ul>	<p>300 N. Lake Ave. Suite 500 Pasadena, CA 91101</p> <ul style="list-style-type: none"> <li>• Workman's Compensation</li> <li>• Employee Benefits</li> <li>• Annuity</li> <li>• IRA</li> <li>• 401K &amp; 403B</li> </ul>
--	---	---

**A.B.A. INSURANCE SERVICES**

**Insurance coverage can help you financially!**  
Ապահովագրութիւնը Անհրաժեշտ է

Coverage & Protection should be on the top of your priority list.

**Seniors 65 & Up** Medicare Supplements • Insurance • Prescriptions Drugs RX • Benefits

### ՍՈՒՐԲ ԾՆՆԴԵԱՆ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ ՏՕՆԻՆ ՕՐԸ ՍՐԲՈՑ ՂԵՒՈՆԴԵԱՆՑ ՄԱՅՐ ՏԱԾԱՐԻՆ ՄԵԶ



Սուրբ Ծննդեան Տօնին օրը, Կիրակի, Յունուար 6ի առաւօտեան ժամը 10:00ին, Առաջնորդանիստ Սրբոց Ղեկնդեանց Մայր Տաճարին մէջ թեմակալ Առաջնորդ՝ Գերշ. Տ. Յովնան Արքեպիսկոպոս Տէրտէրեանի հանդիսապետութեամբ կատարուեցաւ ժամերգութիւն՝ դասապետութեամբ Առաջնորդանիստ Մայր Տաճարի Խաչատուրեան Դպրաց Դաս Երգչախումբի Ղեկավար՝ Բրշ. Ստեփան Սրկ. Կէօզիւմեանի: Արարողութեան մասնակցեցաւ Ծուխին Հոգեւոր Հովիւր՝ Արժ. Տ. Խաժակ Քհնյ. Շահպագեան:

Առաւօտեան ժամը 10:30ին Սրբազան Հայրը՝ թափօրով եւ Առաջնորդանիստ Մայր Տաճարի Խաչատուրեան Դպրաց Դաս Երգչախումբի կողմէ «Հրաշափառ» շարականի երգեցողութեամբ առաջնորդուեցաւ դէպի Մայր Տաճար, ուր մատուց Սուրբ Ծննդեան Սուրբ Պատարագը: Սուրբ Սեղանին սպասարկեցին Ծուխի Հոգեւոր Հովիւ՝ Արժ. Տ. Խաժակ Քհնյ. Շահպագեան եւ Եկեղեցւոյ Սարկաւազները: Դպրաց Դասի երգեցողութիւնը կատարեց Խաչատուրեան Երգչախումբը՝ ղեկավարութեամբ վաստակաշատ Դպրապետ՝ Բրշ. Ստեփան Սրկ. Կէօզիւմեանի եւ երգեհոնահարութեամբ Տիար Գեղամ Աշճեանի:

Արարողութեան ներկայ էին թեմական Խորհուրդի Ատենապետ՝ Արմէն Համբար, Լոս Անճելըսի մէջ պաշտօնավարող Հայաստանի Հանրապետութեան Գլխաւոր Հիւպատոս՝ Մեծայարգ Տիար Գրիգոր Յովհաննիսեան, Մեծայարգ Տիար ձանի Իպարահիմ՝ Լոս Անճելըսի մէջ պաշտօնավարող Լիբանանի Գլխաւոր Հիւպատոս, որուն կ'ընկերանար Տիար Գարիմ ձուտ, Մեծայարգ Տիար Ազարլ Գրուօ՝ Լոս Անճելըսի մէջ պաշտօնավարող Ֆրանսայի Գլխաւոր Հիւպատոս, Մեծայարգ Աստիպլըիմէն Մայք Կաթօ, որ կը ներկայացնէր 43րդ Շրջանը, Լոս Անճելըս Քաղաքապետարանի Խորհուրդի Անդամ Մեծայարգ Տիար Էրիք Կարսեթի, Տիար Արա Աբրահամեան՝ Ազգային Բարերար եւ Նախագահ Ռուսաստանի Հայկական Միութեան, Սրբոց Ղեկնդեանց Մայր Տաճարի Բարերարներ, Մայր Տաճարի Գլխաւոր Բարերար՝ Տոքթ. Արամայիս Պարոնեան, ՀԲԸՄ Կեդրոնական վարչութեան Փոխ Նախագահ՝ Տիար Սինան Սինանեան, Բարերարներ, Կնքահայրեր եւ Հայ Համայնքի ներկայացուցիչներ եւ

հաւատացեալներ: Սրբազան Հայրը սիրալիր եւ հոգեկան հրճուանքով ողջունեց անոնց ներկայութիւնը: Սուրբ Պատարագի աւարտին Սրբազան Հօր հանդիսապետութեամբ կատարուեցաւ Զրօրհնէքի Արարողութիւն, որուն մասնակցեցան Տէր Հայրը, Սարկաւազներն ու Երգչախումբը: Խաչի Կնքահայն էր Սրբոց Ղեկնդեանց Մայր Տաճարի Աւագ Բարերար՝ Տիար գաւէն Ագեան, որ արժանացաւ Սրբազան Հօր օրհնութեան:

Արարողութեան ախարտին հաւատացեալներ երկիւղածութեամբ մօտենալով յատուկ գաւաթներով ստացան օրհնուած շուրէն եւ համբուրեցին Սուրբ Խաչը: Ապա Երգչախումբը «Խորհուրդ Մեծ» շարականի երգեցողութեամբ Սրբազան Հայրը առաջնորդեցին դէպի Արմէն Համբար Դահլիճ, ուր Սրբազան Հայրը դարձեալ շնորհաւորեց բոլորին Նոր Տարին եւ Սուրբ Ծնունդը եւ բարեմաղթութիւններ կատարեց:

### ՍՈՒՐԲ ԾՆՆԴԵԱՆ ԱՒԱՆՂԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ

Յունուար 6ի երեկոյեան ժամը 6:00ին Առաջնորդ Սրբազան Հայրը մասնակցութեամբ Գերշ. Տ. Վաչէ Արքեպիսկոպոս Յովսէփեանի, Լոս Անճելըսի շրջանի հոգեւորականներու եւ Սարկաւազներու, Սրբոց Ղեկնդեանց Մայր Տաճարի բեմին վրայ կատարեց Զրօրհնէքի Արարողութիւնը:

Այս առթիւ Սրբազան Հայրը տուաւ իր հոգեւոր պատգամը, որուն մէջ ըսաւ:

«Սուրբ Ծնունդը աշխարհի կեանքին մէջ կը խորհրդանշէ նոր կեանքին արշալոյսը: Նոր կեանքի Քրիստոս. հոգեւոր բովանդակութեամբ հարուստ կեանք մը, որ տեսիլքը ունի բարոյական արժէքներու, բայց մանաւանդ Աստուծոյ հետ ապրուած կեանքին: Սուրբ Ծնունդը քրիստոնէայի կեանքին մէջ եւ ողջ քրիստոնէայութեան համար կը բացայայտէ Աստուծոյ անսահման սէրը աշխարհի եւ մարդկանց համար: Անոր մէջ մենք կը տեսնենք մեր ճշմարիտ ներաշխարհը եւ ահա այդ պահուն մեր մէջ կը սկսի իմորումը նոր մարդուն, երբ մեր կապը Աստուծոյ հետ կը վերամշակենք եւ ի մասնա-

### ՓԱՍՏԻՆԱՅԻ ՀԱՄԱԳԱՂՈՒԹԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ ՄԱՍԼՈՅ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պատմութիւնը կը վկայէ որ 1889 թուին այստեղ հաստատուած առաջին հայերը եղած են Փաշիկեան եղբայները: Այդ ետանդուն եւ գործարար եղբայներէն մէկը՝ նոյն իսկ 1915 թուականի Յունուարի 1ի «Ռոպ ֆարատ»ի Կրանտ Մարշալ» եղած է:

Ամիսներ յետոյ Արեւմտեան Հայաստանի մէջ եղած մեծ ոճիրէն ետք՝ հայերը բռնեցին գաղթի ճամբան: Շատեր հաստատուեցան Հարաւային Գալիֆորնիոյ այս գողտրիկ քաղաքին մէջ: Անոնցմէ ոմանք մեծ ներդրում ունեցան քաղաքի բարգաւաճման գործին մէջ: Հիմնուեցան առեւտրական հաստատութիւններ, եկեղեցիներ, դպրոցներ եւ այլ կառույցներ:

Հայերը երբեք չմոռցան Մայր Հայրենիքը ու մանաւանդ Մեծ Եղեռնի սարսափները: Ընդառաջ երթալով Յեղասպանութեան 100 ամեակը նշելու կոչին՝ կազմուեցաւ համագաղութային Մարմին մը, որուն մաս կը կազմեն ներկայացուցիչներ տարբեր միութիւններէ եւ կուսակցութիւններէ: Անոնք հանրութեան ներկայացուցին «Վիքթորի Փարք»ի (Victory Park) մէջ յուշարձան մը կառուցանելու գաղափարը, որ ջերմօրէն ընդունեցաւ ժողովուրդին եւ քաղաքապետ Պիլ Պոկարթի կողմէ եւ այս կապակցութեամբ ստորագրուեցաւ յատուկ յուշագիր: Փաստորինայի մէջ Մեծ Եղեռնի զոհերու յուշարձանի հայկական պատուիրակութիւնը քաղաքի իշխանութիւններուն հետ հանդիպումներ ունենալէ եւ ցուցմունքներ ստանալէ ետք, մրցութի յայտարարքի մը հրապարկեց 2011 թուականի Յունիսին, Վիքթորի Փարքի (Victory Park) մէջ տեղի ունեցած Հայ Ինքնութեան փառատօնին ժամանակ: Հոն ներկայացուած էին յուշարձանի որոշ նմուշներ:

Գրական իր հաւատա՞մբքը տեղ մը գրած է ան. «Ուզում եմ որ գրականութիւնը օգնի մարդուն՝ իր կեանքը իբրեւ արեւ ապրելու»: Տեսլական մը՝ գրականութեան վերափոխիչ, ազնուական դերը ընդգծող եւ մարդուն լինելիութիւնը շրջափոխող: Մարդ-արեւին, ինքզինք սպառելով շրջապատին լոյս ջամբող մարդուն գերագոյն եւ վսեմագոյն գաղափարն է այս տեսլականը: Օգտապաշտի որակումը հոս կը մնայ տփփոյն: Որովհետեւ, ան չ'արդարացներ Պետրոսեանի գեղապաշտի ալ ձգտումը: Աւելի ճիշդ պիտի ըլլար ուրեմն գեղապաշտօրէն ձգտումնաւոր գրականութիւնը որակումը տալ: Ա՛յս է անձա՛ վարդգէս Պետրոսեանի արձակի բանալին, առանց որուն դժուար պիտի ըլլար ճշգրտօրէն բնորոշել ստեղծագործական իր աշխարհն ու հայեցողութիւնը: Մարդն ու իր վաստակը կը բացայայտուին այս տեսադաշտին մէջ:

Պետրոսեանի գեղարուեստական արձակը հպատակած է նաեւ յարատեւ վերանորոգումներու, ինքնանուաճումի եւ զարգացումի հետամուտ՝ նոր հանգրուաններու նուաճումով եւ նորութեան փնտրտուքով արգասաւորուած: Անհանդարտ, խուզարկող գրողին համար իւրաքանչիւր նուաճուած հանգրուան վախճան մը ըլլալէ հեռու, նոր հարցադրումներու եւ որոնումներու վրայ բացող նոր պատուհան մըն է: Այդ հանգրուանները կը կոչուին. «Վերջին Գիշերը», 1958, «Անաւարտ Դիմանկարներ», 1963, «Հայկական Էս-

քիզներ», 1969, «Դեղատուն Անի», 1973, «Վերջին Ուսուցիչը», 1980, «Մենաւոր Ընկուզենին», 1981 եւ «Կրակէ Շապիկ»ը 1986:

Այս շարքին մէջ, «Հայկական Էսքիզներ»ը քրոնիկներու կալուածին կ'ենթարկուին: Բայց առանց անոնց, կարեւոր երես մը պիտի պակսէր Պետրոսեանի գրական դիմաստուերէն: Խճանկարային այլազանութեամբ օժտուած այդ հիւթեղ եւ գունազարդ մանրապատումները, ճանապարհորդական նօթերն ու մանաւանդ ամբողջութեամբ հայութեան տագնապող խորհրդածութիւնները, շնորհիւ գիրենք ընկալող եւ մատուցող արուեստի տինամիք ուժգնութեան, հասած են գրական նուաճումի եւ անպայման մաս կը կազմեն գրողի ժառանգին: Վաթսուական թուականներու, հայրենիքէն մինչեւ ի սփիւռս աշխարհի, հայութեան գլխաւոր տագնապներուն վաւերաթուղթը կը գտնենք հոն, շքեղ ու արագ ոճով եւ սուր դիտողականութեամբ սեւեռուած:

«Վերջին Գիշերը» անդրանիկ ժողովածուն է, ուր արդէն կը գտնենք նախաձաշակ մը գրողին նոր արեւելումէն, որ սակայն տակաւին կը կարօտի ինքնուրոյն բիւրեղացումի հասնելու: Շուտով, յաջորդ «Անաւարտ Դիմանկարներ» պատմուածքներու շարքով կը նուաճուի այդ բիւրեղացումը: Հատորը պիտի բացուէր գարնանային պայծառ իր շունչով եւ պիտի յայտնաբերէր սուր դիտողական կարողութեամբ, անհանդարտ խառնուածքով եւ նոր տեսակի մտերմիկ մարդկայնութեամբ օժտուած գրողը՝ արագ, ճկուն եւ հիւթեղ ոճի մը բարիքներուն հետ: Ընդհանրապէս մթնոլորտի պատմուածքներ էին անոնք. դէպքերէ, եղելութիւններէ եւ հանգուցաւորումներէ գերծ: Պետրոսեան կը պարզէր ներաշխարհի պատառիկներ, ներանձնական մտերմիկ պահեր, ապրումներ ու խոհեր, զանոնք քնարական նուրբ ու մեղմ լոյսով մը ջերմացնելով: Թեթեւ հպումներով, գուսպ գոյներու եւ գիծերու վրձինումով կեանքի կոչուած դիմանկարներ են պարմանիներու, առ երեւոյթ անաւարտ ու ուրուագծային՝ բայց անպայման ամբողջացած մեր հայեցողութեան մէջ, շնորհիւ գրողին լիակատար թելադրականութեան: Նրբերանգներու անաղմուկ մուտքն է այս հատորը հայրենի գրականութենէն ներս: Մթնոլորտի եւ հերոսներու ճակատագրի միանուութիւն մը ակներեւ է այս եւ այլ պատմուածքներու շարքին մէջ: Ցաւած սէրերու, չհասկցուած, անտեսուած հոգիներու, անհաղորդ կարծուած մղումներու, ներքին բեկուած թեւաբախումներու փխրուն աշխարհն է այդ՝ պարուրուած նրբահիւս թախիճի մը մութն ու լոյսով: Այդ ժամանակներու գոյգերուն հարցականներն ու դիմակալումները կը գրաւեն կարեւոր տեղ մը այդ պատմուածքներուն մէջ: «Պատահաբար վագոնի նոյն կուպէն ինկած մարդկանց նման» ապրող գոյգերուն գորշ առօրեան, դաժան դէպքերու հարկադրանքով բաժնուած գոյգերու ողբերգութիւնը, ուշացած սէրերու դառնութիւնը, կուղպ ներաշխարհներու անհաղորդ մնացած տրաման եւ երկչոր ու վարանոտ հոգիներու յարատեւ երկընտրանքը սեւեռուած են հոն հոգեբա-

### ՀԱՅ ԺՈՂՈՎՈՐԴԻ ՆԵՐԿԱՆ

#### ԹՈՐԳՈՄ ՓՈՍԹԱՅԵԱՆ

Ամէն տարուան վախճանին եւ ամէն Նոր Տարուան դիմաւորութեան օրը՝ մարդիկ կը տարուին մտածելու ՍԱՀՈՂ ԺԱՄԱՆԱԿԻ մասին: Անցեալի, Ապագայի եւ յատկապէս «ՆԵՐԿԱՆ»-ի մասին է որ կ'ըլլան այդ խորհրդածութիւնները:

Այն որ «ՆԵՐԿԱՆ» կ'ըսենք մենք՝ ակնթարթ մըն է միայն: Այդ ակնթարթը, «ի քթի վրայ» (աչքի բացիւման) արագութեամբ՝ իսկոյն կը դառնայ անցեալ: Այդ անցեալի եւ յաջորդող ապագայի «Միութիւնն» է ներկան:

Ճիշդ այնպէս ինչպէս երգի մը ունկնդրութեան ատեն լսողը՝ «անցեալ եւ ապագայ» ներդաշնակ ձայներու «ներկա»յութեան միութիւնը:

Ազգեր եւ ժողովուրդներ եւս ունին իրենց Անցեալն ու Ապագան միաւորող՝ ներկայութիւններ: Այսինքն «Պատմական անցեալն» ու «Յուսադրիչ ապագան» միաւորող ներկան:

Սփիւռքի Հայութիւնը, ժամանակի սահանքին հետ կ'երթայ փոփոքէ փոփոք, տեղ-տեղ, մէկ օտար երկրէ ուրիշ օտար երկիր: Կ'երթայ: «Առանց Անցեալի», «Առանց Ապագայի» եւ մանաւանդ առանց «Ներկայի», որովհետեւ կը պա՛կսի, կը պա՛կսի ամենէն կարեւորը... կը պակսի «Միութիւնն»: Անցեալն ու Ապագան զօրող Միութիւնը: Այսինքն Հայ ժողովուրդի «Ներկան» ապահովող Միութիւնը:

Այդ «Միութիւնն»ը՝ «Ներկայ» է միշտ, կամ գոյութիւն ունի՝ միակ երկրի մը մէջ, որ «Հայ ժողովուրդին Հայրենիքն է», իրն է այն: Իր պայերէն ժառանգած «Հօրենական Տունն» է ան:

Մեր հերոսներուն եւ նահատակներուն արիւնով նուիրագործուած եւ Սուրբ էջմիածնով «Լուսաւորչականացած» «Հայաստան Աշխարհն է այն, Մեր Երկիր Դրախտավայր»ը:


Հոն, Հայաստանի մէջ է որ՝ պահպանուած են մեր դարաւոր սրբութիւններն ու աւանդութիւնները: Հոն են մեր հերոսներու եւ նահատակներու աճիւնները: Հոն է որ կանգուն կը մնան մեր ճարտարապետական կոթողները, մեր եկեղեցիներն ու վանքերը:

Հոն, Հայաստանի մէջ է՝ ուր ժամանակը չի սահիր երթար, որովհետեւ ժամանակը կապտուած է հոն, եւ պահպանուած է անկորչելի եւ անջնջելի՝ շքեղ շրջանակի մը մէջ, որ «Հայ ժողովուրդի Ներկան է»՝ Հայաստան Աշխարհի Ներկան:

Հոն, Հայաստանի մէջ է միայն՝ որ Հայը կ'ապրի եւ յաւիտեան պիտի ապրի՝ զմայլելի եւ «Անմահական «Ներկա»յութիւն մը:

Նական նուրբ դրսեւորումներով: Հոգիէ - հոգի հաղորդակցութեան ցաւազին փնտրուքն է խարխիւր այս բոլոր տուայտանքներուն: «Կողքիդ նաստած մարդկանց ամէն մէկը ինչքան լոյսեր ունի հոգու լուսամտի տակ» կ'եզրականացնէ Պետրոսեան եւ կը ձգտի այդ լոյսերը բանալ մեր հաղորդակցական տեսողութեան առջեւ:

Շարք էջ 18



## ՅՈՒՇ ԵՐԵՎՈՅ

### ՀՐԱՆԴ ՏԻՆՔԻ

#### ՆԱՀԱՏԱԿՈՒԹԵԱՆ ԸՐԴ ՏԱՐԵԼԻՑԻՆ ԱՌԹԻԻ

Կազմակերպութեամբ՝  
ՊՈԼՍԱՀԱՅ ՄԻՈՒԹԵԱՆ

Բացման Խօսք՝ Յովհաննէս Գուլակ Աւետիքեան  
Հոգաբարձու եւ Ատենապետ՝ Պոլսահայ Միութեան Մշակութային Ցանկնախումբին (Հայերէնով)

Հանդիսավար՝ ԱԲՕ ՊՈՂԻԿԵԱՆ  
Գլխաւոր խմբագիր Ասպարէզ օրաթերթի

Զեկոյց՝ Իրաւաբան ԷՏՎԻՆ ՄԻՆԱՍԵԱՆ  
Ատենապետ՝ Պոլսահայ Միութեան Հոգաբարձութեան եւ Խախիկի Ատենապետ Հայ Իրաւաբաններու Կաճաթի

**Յուլացումներ ոճրային հետազօտութիւններուն ներկայ վիճակին մասին եւ տեղեկագիր Հրանդ Տինքի Հիմնարկին գործունէութեանց նկատմամբ:**  
(Անգլերէնով)

Գլխաւոր Բանախօս՝  
**ԽԱՀԻԿ ՄՈՒՐԱՏԵԱՆ**  
Պոսթընի «Արմինիըն Ուիքլի»ի վարիչ խմբագիր

Նիւթ՝  
**ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԵՐԿԱՆ**  
**ԹԱՔՈՒՆԻ ԵՒ ԲԱՅԱՅԱՅՏԻ ՄԻՋԵՒԻ** (Հայերէնով)  
Գեղարուեստական Ցայտագիր

Կիրակի, Յունուար 13, 2013, երեկոյեան ժամը 6:00ին  
Պոլսահայ Միութեան «Գրիգոր եւ Աւետ Քիւրքչիօղլու» սրահին մէջ  
**19726 Sherman Way, Winnetka, CA 91306**  
Տեղեկութեանց համար հեռաձայնէլՏոքթ. Յովհաննէս Գուլակ Աւետիքեանին (818) 800-1976 (cell)

**Մուտքը ազատ** **Հիւրասիրութիւն**

### ՄԵՆԱԴՈՐ ԳՐԱԳԻՏՈՒՅԻՆ ԳԻՒՏՑԻ ՄԻՔԱՅԵԼԵԱՆ

#### ԼԻԻՍԻՍԻԼԱԿԱՆ

Տարիներով սարգոստացին թանձր քողի ետին ծուրարած, քաղցրիկ չուշ մը քնքոջ կ'արթննայ ու թռչունի փետուրի փափկութեամբ, գարնանային գեփիւռի հոսանքով կը տանի զիս հեռու, Ֆիլադելֆիա, Վինվուսի շրջանը: Լայնատարած բլուրի մը վրայ թառած մենաւոր դղեակի մը մուտքին, ուր հագար ու մէկ ծաղիկներու յորդուն ծաղկումին բուրմունքը կը յամենայ օդի մէջ գզլիւիչ: Թռչուններու ճոռոտողիւնը կը լսեմ կարծէս ու կը տեսնեմ ծառերու ճիւղերէն կախուած ամանիկներ լի ցորենի հատիկներով: Մենաւոր դղեակի մենաւոր Տիրուհիին բարեկամներ են այդ ծիտիկները: Այլ կենդանիներ ալ կան թուփերի ետին: Կրեայ մողէս եւ ազատօրէն մննիկ քայլերով պտտող սկիւռիկներ որոնք ակնթարթի մը մէջ կը մագլցին ծառերուն գագաթը: Կայ նաեւ տարիներու պահպան բարեկամ իր շուկը: Եւ փոքր հողամաս մը շրջապատուած բարախիկ ցանկապատով լի կարմրաւուն լոլիկներու ողկոյզներով, թաւապատ կանանչ վարունկներով: Եւ սեւ BMW-ը բազմած կարածէն դուրս մշտադալար ծառի մը շուքին:

Եւ ահա ինք համեստ դղեակի տիրուհին, թարմագեղ, հակառակ տարիներու թաւալումին, ժպտուն ու սիրալիւր կ'ողջունէ, Տիկիններու խմբակը:

Կը ծանօթացնեն զիս: -Կը ճանչնամ, շատոնց կը ճանչնամ «Սփիւռք» շաբաթաթերթէն «Շիրակ» ամսագրէն, կ'ըսէ Գուտսին:

-Ես ա'լ ծանօթ եմ Գուտսի Միքայէլեանի, «Սփիւռք»էն «Շիրակ»էն եւ... շատոնց, կ'ըսեմ, կրկնելով Գուտսի խօսքերը: Կը խնդանք ու կ'ողջագոլորուինք հին ծանօթներու պէս:

Ընկերային հաւաք մըն էր այդ հանդիպումը: Խօսուն էր Գուտսին, կրցաւ Տիկիններու հաւաքին մթնոլորտը հաճելի ժամանցի վերածել, արեւելեան նախաճաշի սեղանին շուրջ: Ֆուլ, համոս, ճերմակ պանիր, գահթէր, կանանչ ձիթապտուղ, խաշած հակիթ, թէյ, կաթ, առաւել քաղցրաշուրով շամալի: Նախաճաշի վերջաւորութեան Տիկինները, հիւրասիրուեցան, արեւելեան սեւ սուրճով, ոսկեգոյնով եզերուած

պզտիկ գաւաթներով: Եւ գարմանալի... Սուրճի գաւաթ «կարդալ»ու, ժամանց մըն ալ սկսաւ տան Տիկինին կողմէ: Ա'լ խնդալ, ա'լ պոռչտուքնե'ր: «Աման իրա'ւ է» կամ «ինչպէ՞ս գիտցա'ւ» եւ այլ դրական գովասանիկներ:

-Գաւաթդ չե՞ս դարձուցած, Գուտսին է հարցնողը: -Սուրճ չե՞մ խմած -, ըսի ժպտագին:

-Ե'ս քե'զ կը վարժեցնեմ, ըսաւ հեզնախառն ժպտով: Տիկինները ոտքի ելան, շնորհակալական խօսքերով ողողեցին Տանտիկինը եւ կրկին տեսնուելու մաղթանքով բաժնուեցան դղեակէն:

Գուտսին թեւէս բռնեց, - Գուտս մնա' ե'ս կը հասցնեմ քեզի-, ըսաւ:

Մնացի: Մինչ ինք հիւրերը կը ճամփէր ես պարտէզ ելայ: Գոյնզգոյն ծաղիկներ ցրուած էին հաստաբուն ծառերու շուրջ: Վարդերու, յամիկներու բուրմունքը կը տարածուէր օդին մէջ հովի մեղմիւ հոսանքով: Հագիւ քայլ մը առած ծիտիկներ այլ տեսակի թռչուններ թափահարելով իրենց թեւերը գլխուս վրայէն անցան, թռան, մագերս խառնշուկելով: Օտարի մը յանկարծ ներկայութիւնը խրտչեցուցած էր զիրենք: Գուտսին եկաւ ու խնդուն, - Ջարմացա՞ր որ սուրճի գաւաթ կարդացի-, հարցուց: Սեւ աչքերը ծիծաղուն կը փայլէին չարածճի ժպտով մը, շարունակեց խօսիլ,

-Ձե'մ գիտէր ժողովրդական ի՞նչ հաճոյք է սա, ընդհանուր առմամբ հինէն եկած սովորութիւն մըն է: Առօրեայ աշխատանքէ ետք հաճոյքի պահ մը, միտքերը ցրուելու, սիրողին, անյոյսին, դժուարութեան մէջ եղողին, լոյս, յոյս ներշնչելու, բարօրութիւն պարգեւելու: Տեսակ մը գիտութիւն է այս եւ նաեւ ձեռքի գիծեր կարդալը: Կը խօսի'նք դեռ այդ մասին: Ես horoscope-ով ալ կը հետաքրքրուիմ: Բայց դու'ն, տարբե՞ր մթնոլորտ մը կ'սպասէիր Գուտսինին մօտ որպէս գրագիտուհի, այդպէ՞ս չէ: Նոր վէպ մը սկսած եմ, կը կարդամ քեզի, կարծիքդ կուտա'ս: Բայց հիմա, կ'ուզեմ մտքիդ մէջ յատկացնել այսօրուայ մեր այս հաւաքոյթին շարժառիթը: Քեզ իմ մենաստանս առաջնորդող Տիկինը, միւս Տիկինները թերեւս մեզի չափ

ուսման եւ գրականութեան հետեւելու առիթը չեն ունեցած: Մեզ հետաքրքրող նիւթը, նիւթերը, թերեւս ձանձրանալի թուին իրենց: Պարզ ընկերային ժամանցի մը պէտք ունին: Որովհետեւ այս Տիկինները իրենց առօրեայ դուրսի եւ տնային աշխատանքներէ ետք ազգային աշխատանք կը տանին հայկական մշակութային կեդրոնէ ներս: Ամէն Ուրբաթ երեկոյեան ընթրիք կը սարքեն, դասախօս կը հրաւիրեն որ այս գաղութը բնակող ափ մը հայերը քով քովի գան ու գիրար տեսնեն: Զոհողութիւն է իրենց ըրածը:

Եւ իրենց համար հաճելի է որ գրող Գուտսին իրենց պէս պարզ խօսող խնդացող նոյնիսկ քիչ մը աւելի... սուրճի գաւաթ կարդացող ա'լ է: Ձե'մ գարմանար եթէ գալ Ուրբաթ երեկոյեան բանախօսը դու'ն չ'ըլլաս-, եզրակացուց Գուտսին:

Այսպէս եղաւ իմ առաջին հանդիպումս Գուտսի Միքայէլեանի հետ եւ ըսածին պէս յաջորդ Ուրբաթ ինքզինքս գտայ Ս. Սահակ, Ս. Մեսրոպ եկեղեցուց սրահը ուր թէքէեան Մշակութային Միութիւնը իր միջոցառումները կ'իրագործէր, բարեհաճ արտօնութեամբ մշակութասէր հովիւին: Նիւթա՞ «Հայկազայ Գաղութը» Հայրենասէրներու հաւաքակառութիւն մըն է Ֆիլադելֆիոյ հայութիւնը եւ սրտին մէջ կը կրէ նաեւ Միջին Արեւելքի կարօտը, ի մասնաւորի Հայկա քաղաքի որ շատ շատերուն ծննդավայրն ա'լ է:

Գուտսինին հետ մեր բարեկամութեան կապը սկսաւ գրականութեան ճամբով: Իր նկարագրի պարկեշտութեան, ուղղամտութեան, եւ իր մենաստանին մտերմիկ մթնոլորտին առթած ջերմութեան քաղցրիկ հիւսքերով կապուեցաւ: Եւ եղաւ ամուր ու մնայուն: Կը հեռաձայնէր ու կ'ըսէր:

- Երթանք տեղ մը սուրճ խմենք -, ու կը ծիծաղէր գիտնալով որ սուրճ չեմ սիրեր, չեմ օգտագործէր:

Թանգարան, գրադարան, ծովափ կ'երթայինք, ընդհանրապէս: Թանգարանի կողքին էր Մհերի արձանը ուր կը հաւաքուէր Ֆիլադելֆիոյ հայ գաղութը, ամէն Ապրիլ 24-ին, նշելու եղեռնի իր գոհերուն յիշատակը:

Անմիջապէս անդին լայնատարած պողոտայի երկայնքին շարուած էին ընդհանուր Ազգաց դրօշակները եւ բոլոր այդ

դրօշներու կարգին, հայկական կարմիր, կապոյտ, նարնջագոյն, հովի քմահաճոյքով հպարտօրէն կը տարուբերէր, Ազգային երեք ծիածանի գոյները:

Երբեմն ալ «Mall» կ'երթայինք եւ «Sale» եղած «Jeans» բէշ կամ հագուստ գնելու: Գուտսին կը սիրէր «Jeans» հագնիլ առօրեայ իսկ պաշտօնական տեղեր, Tahari, Liz Clerbon եւ այլ Signe costume-ներ ունէր:

Երբեմն ալ BMW-ը կը շարէր ծառի մը շուքին ու այդպէս կը թափառէինք աննպատակ, գետին եզերքը: Մանաւանդ երեկոյեան երբ արեւը հանդարտ գետի ափին կը մօտենար ու մեղմիւ կը սահէր վար եւ կարմրաւուն իր շողերով լուր կ'ընկղմէր գետի վարարար շուրերուն մէջ:

Գուտսին Ամերիկեան իր ներկայ կեանքին մասին կը խօսէր բայց Պէյրութի մէջ ապրած անմոռանալի օրերը չէր մոռնար, միշտ կը յիշէր:

Լեւոն Վարդան «Շիրակ» ամսագրի գրած «Լիբանանահայ գրականութիւն» իր սերտորոշութեան մէջ, ներկայացուցած էր Գուտսին որպէս Լիբանանահայ գրող իսկ այժմ Գուտսի Միքայէլեան Ամերիկահայ գրող էր: Առանձին կ'ապրէր տարիներէ ի վեր երկայրկանի իր դղեակին մէջ եւ կը ստեղծագործէր: Բայց մենաստան այդ դղեակը շատ գործ կը պահանջէր իրմէ:

Գանգատ ներկայացնելու պէս կը խօսէր:

-Վարժուեցայ այդ մարդու աշխատանքներն ալ ե'ս ինքս ընելու-, կ'ըսէր: Հպարտ էր Գուտսին եւ անզիջող նոյնիսկ ինքզինքին հանդէպ:

Ժամանակի ընթացքին սուրճի հաճոյքին վարժուեցայ Գուտսինին հետ: Սուրճի գաւաթս կարդալուն ա'լ: Զիս հետաքրքրելու նպատակաւ ցոյց կուտար սուրճի մրուրին կազմած նկարները եւ իւրաքանչիւր նկարին իմաստը կը բացայայտէր: Հաճելի ժամանց էր իրապէս:

Իր աշխատասենեակը ուր կը նստէինք յաճախ կը յորդէր ամերիկեան եւ հայկական թերթերով: Աչքէ կ'անցնէր բոլորն ա'լ: Կը հետաքրքրուէր ընկերային քաղաքական եւ այլ եւ այլ նիւթերով: Իր յօդուածներուն մէջ որոնք ընդհանրապէս կը գնահատուէին որ եւ է միտք, գաղափար, կ'օգտագործէր պատշաճեցնելու մեր ազգային կեանքին ի նպատա:

Շար.ը էջ 20



### ՍՈՐՎԻՐ ԻՆՉՊԵՍ ԵՒ ՆՈՐՈՇՈՒՄ Կ'ԱՌՆԵՍ

Բոլորս ալ կ'անցնինք այնպիսի ժամանակներէ, երբ կը զգանք, թէ մենք ճիշդ ենք եւ բոլոր աշխարհը սխալական է, հետեւաբար, կառչած կը մնանք մեր կարծիքներուն եւ ընտրութիւններուն:

Սակայն արդեօք մենք յարմար ընտրութիւնը կատարած ենք: Ինչպէ՞ս կը գիտնանք, որ այդ մէկը ճիշդ էր ու կ'արտացոլայ մեր անհատականութեան իսկական համոզումները: Արդեօք որոշ մեքանիզմ մը գոյութիւն ունի՞, որ կ'օգնէ մեզի ճիշդ որոշումներ առնելու: Այս հարցումին պատասխանը կը կայանայ այն եօթը կէտերը ճանչնալու մէջ, որոնք կը հարթեն դէպի առողջ որոշման ճամբան:

1) Սահմանել այն խնդիրը, որուն առնչութեամբ որոշում պիտի տանք. երբեմն կը սխալինք այդ գծով, ոչ թէ քանի որ որոշումը սխալ է, այլ որովհետեւ չենք սահմանած անոր միջոցով մեր հասնելիք իրատես նպատակը: Օրինակի համար, եթէ շուարած ենք, թէ մեր զաւակը ո՞ր դպրոցը պիտի ուղարկենք, պէտք է մենք մեզի հարց տանք, թէ հարցը ուսումնական մակարդակով լաւ վարժարան մը ընտրելն է, թէ մեր նիւթական, ընկերային ու տնտեսական վիճակին յարմարողը:

2) Ուսումնասիրել այն չափանիշները, որոնց հիման վրայ հաւանականութիւններուն միջեւ ընտրութիւն պիտի կատարենք: Օրինակի համար, եթէ որոշումը առարկայ մը գնելու մասին է, պէտք է անոր առնչութեամբ մեզ հետաքրքրող առաջնահերթութիւնները սահմանել, ըլլայ այդ գինի, որակի, արհեստագիտական յատկանիշերու կամ այլ չափանիշերու վերաբերեալ:

3) Փոխարինող ձեռնտու որոշում սահմանել եւ անոր մասին տեղեկութիւններ հաւաքել, որպէսզի յետագային կարենանք երկուքին միջեւ ընտրութիւն կատարել, մասնաւանդ ինչ կը վերաբերի չափանիշերու եւ նախապէս նշուած առաջնահերթ կէտերու:

4) Չեղարկած չափանիշերուն եւ առաջնահերթութիւններուն հիման վրայ կատարել իտէալ ընտրութիւնը: Եթէ գնումի որոշում է, օրինակի համար, ապա նախընտրելի է գնել այն արտադրութիւնը, որ կը միացնէ լաւագոյն որակը, յարմար հնարաւորութիւնները եւ միջին փոխարժէքը: Եթէ տեսնենք, որ մեր որոշումը օգնեց հարցը լուծելու, ադ կը նշանակէ, թէ ճիշդ էր եւ յաջողած ենք այդ ընտրու-

թիւնը կատարելով:

5) Շուարեցուցիչ որոշումի մը դիմաց կանգնելու պարագային չաճապարել եւ քանի մը օր ետք հարցը վերատեսութեան ենթարկել, տարբեր ժամանակներու ընթացքին, եւ կամ դիմել մասնագէտներու խորհուրդին: Պէտք է յիշել, որ իմաստուն կերպով ուսումնասիրելը եւ աճապարանքէ հեռու մնալը անպայմանօրէն մեզ պիտի հասցնեն առողջ եւ յաջող արդիւնքի:

Սակայն երբեմն շատ մտածելը եւ հարցերը կրկնակի կերպով վերատեսութեան ենթարկելը շփոթ կը պատճառէ մեզի եւ կ'արգիլէ որեւէ որոշում տալէ:

6) Որոշում առնելու գործողութիւնը ճամբուն աւարտը չէ, այլ իրականութեան մէջ՝ անոր սկիզբը: Կարեւորը այն է, որ ինչպէս այդ որոշումը գործադրել՝ սահմանուած ժամանակին, երբ պէտք կայ հետեւողականութեան եւ ի պահանջեալ հարկին՝ որոշ փոփոխութիւններու: Հետեւաբար, պէտք է ընկճուիլ կամ յուսախաբ ըլլալ, եթէ յայտնաբերենք, որ մեր որոշումը սխալ դուրս եկած է, որովհետեւ զայն շտկելու հաւանականութիւնը միշտ ներկայ է, նոյնիսկ եթէ սուղ վճարենք այդ սխալին գինը:

7) Որոշում առնելը գործողութիւն մըն է, որ պէտք ունի կիրառման եւ փորձառութեան: Ան հիմնական գիտութիւն մըն է կեանքի ընդհանուր գիտութեանց շարքին, եւ պէտք է օգտուինք մեր դիմակալած որեւէ ձախողութենէ, որուն հանդիպած կ'ըլլանք նախկին որոշումներու ժամանակ՝ ապագայի որոշումները բարելաւելու նպատակով: Այս մէկը կարելի կը դառնայ խանգարման բաժինները սերտելով, գիտնալու համար ձախողութեան առաջնորդող պակասաւոր քայլը:

\*\*\*

Երբ մեր անձը վարժեցնենք վերոնշեալ եօթ կէտերու հիման վրայ քայլելու, մեր որոշումները կը դառնան աւելի դիւրին եւ գործնական:

Այս բոլորէն ետք կասկած չկայ, որ տրամաբանութիւնը հիմնական դեր կը խաղայ ճիշդ որոշումը տալու գծով, սակայն նախագագացումը նաեւ ունի իր ցցուն եւ վճռական դէմքը: Եթէ առնենք տրամաբանական որոշում մը՝ բացասական եւ դրական բոլոր հաւա-

Շարք էջ 17

### ԴԱՆԴԱՂ ՍՈՐՎՈՂ ԱՇԱԿԵՐՏԸ ՊԵՏՔ ՈՒՆԻ ՎԱՐԺՈՒԹԻՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ

Ակադեմիական եւ ուսումնական հարցերն ու դժուարութիւնները կը շարունակեն մնալ ծնողներուն եւ ի մասնաւորի մայրերուն գլխաւոր չարհարանքը: Այս տողերուն մէջ կը սերտենք շատերուն տառապանքի աղբիւրը հանդիսացող դանդաղ սորվելու հարցը:

\* Ինչպէ՞ս կարելի է բնութագրել դանդաղ սորվիլը.

Այս պարագան, երբ աշակերտը անկարող կ'ըլլայ կից դասընկերներուն հետ համընթաց կերպով յառաջանալ ուսումնական գետնի վրայ, եւ այս՝ կրնայ ըլլալ.

1) հոգեբանական պատճառներով, որոնք արդիւնք են արտաքին գործօններու եւ պայմաններու, որոնք խանգարում կը յառաջացնեն պատիկին անհատականութեան մէջ.

2) ընկերային պատճառներով, որոնք արդիւնք են անոր անհատականութեան վրայ բացասականօրէն արտացոլացող դժուար վիճակներու.

3) մտային պատճառներով, որոնք արդիւնք են անոր իմացական կարողութիւններու սահմանափակութեան:

Այլ խօսքով, դանդաղ սորվիլը ընդհանուր տկարութիւն մըն է աշակերտին մտային կարողութեան մէջ, որ չի հասնիր թերաճութեան մակարդակի: Ուսումնասիրութիւնները ցոյց տուած են, որ 5 աշակերտէն մէկը կը տառապի այս դանդաղութենէն, եւ այս մէկը անոր կ'ընկերակցի ամբողջ կեանքին ընթացքին:

\* Ի՞նչ են անոր պատճառները.


1) Ընկերային.- Ինչպէս ըն-

Շարք էջ 17

### ԼԱԻ ՔՆԱՑՈՂ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ ԿՐՆԱՆ ԱԻԵԼԻ ՔԱՂԱՔԱՎԱՐ, ԸՆԿԵՐԱՅԻՆ ԵՒ ԱՌՈՂՋ ԸԼԼԱԼ

Անհատական ուսումնասիրութիւն մը ցոյց կու տայ, թէ երկար ժամանակ քնացող փոքրերը կրնան աւելի արդիւնաւէտ եւ առողջ ըլլալ: 7-էն 11 տարեկան նախակրթարանի 34 աշակերտներու մասնակցութեամբ կատարուած այս ուսումնասիրութիւնը նաեւ ցոյց կու տայ, թէ սակաւ քնացող աշակերտներ յաջողօրն իսկ կը ցուցաբերեն վտանգաւոր վարմունքներ եւ կը խանգարեն դասարանը: Անոնք նաեւ հակամէտ կ'ըլլան լալու եւ նեղանալու: Իսկ աշակերտներ, որոնք լաւ կը քնանան,

դասարանին մէջ աւելի ուշադիր, կեդրոնացած, քաղաքավար եւ ընկերային կ'ըլլան, ինչպէս նաեւ լաւ կը կառավարեն իրենց զգացումները: Ուսումնասիրութեան հեղինակները կը շեշտեն, որ նախակրթարանի աշակերտները պէտք է օրական 10-էն 11 ժամ տրամադրեն քնանալու: Անոնք կը թեւադրեն, որ ծնողները քնանալէ կէս ժամ առաջ փոքրիկներուն անհասանելի դարձնեն հեռաձայնը եւ այլ ելեկտրոնային գրադուանները: Թեւադրելի է նաեւ, որ ծնողները ամէն օր նոյն ժամուն քնացնեն փոքրիկները:



# ՏԵՐ ԵՒ ՏԻԿ. ՅԱՐՈՒԹ ՄԱԹՈՍԵԱՆ ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ



### ԱՆԴՐԱՆԻԿ ԵՐԷՅԵԱՆ

Շարունակում է 6-էն

Բատալիոնին նոյնիսկ առաջին յաջող ձեռնարկին մէջ ընդդէմ թշնամիներու՝ ան կ'ըլլայ առաջին խոյացող յառաջամարտիկն, որ թշնամուն ցիրուցան կ'ընէ եւ յաղթական դրօշն ծածանելով, միանգամ եւս կը փաստէ կամաւորներուն հերոսական անվերջութիւնն:

Մանրամասնութիւնները տակաւին կը պակսին: Այս չափն ստույգ է, որ Անդրանիկ Երէցեան ինկաւ հերոսին արժանավայել մահով մը, Ռուսմանիոյ հնչակեան շարքերուն փառք բերելով, որ զինքն ընտրել էին որպէս խմբապետ՝ իրենց ուղարկած կամաւորներուն:

Հերոսական մահով ինկողներն անմահ են եւ Անդրանիկին յիշատակն անմահ պիտի մնայ:

Փառք անոր քաղցր յիշատակին: Մ. Ա.» (5)

\*\*\*

«Տեսայ նրան վերջին պահուն, ձիու վրայ նստած, ռազմաճակատ մեկնելիս:

Նրա վերջին խօսքն էր՝ «գնում եմ կամ պատուով մեռնեմ, կամ պատուով վերադառնամ»:

Մտախոհ էր դէմքը, սիրտը տխուր, բայց, միեւնոյն ժամանակ, մի ինչ որ բարձր զգացմունք նրան մղում էր դէպի իւր սիրած գործը, որը նա գտնում էր այսօր ռազմաճակատում:

Սա նրա անկեղծ հասկացողութիւնն էր եւ այդ պատճառով էլ ես խոնարհուում եմ այդ անկեղծութեան առաջ: Նա եկել էր յանուն այդ գործի հեռուոր տեղից - Ռուսմանիայից: Եկել էր իր տարա բախտ աւերող վաթանը՝ իւր հայրենակիցների դառն բաժակը միասին ընդունելու: Նա եկել էր ոգեւորուած, խանդավառ երազներով եւ մեծ յոյսերով: Նա եկել էր այն ոգեւորութեան էքստազի ժամանակաշրջանում, երբ գալիս էին ամէնքը: Դժուար էր կացութիւնը եւ առաւել դառնացաւ այդ կացութիւնը Անդրանիկ Երէցեանի համար: Բայց նա չէր ընկճուում, չէր յուսահատուում, չէր վհատուում, այլ ընդհակառակը, շատ հանգիստ, բայց «այրուած սրտով» վստահ ասում էր. «Ես մեծ պարտականութիւն ունիմ դեռ կատարելու եւ պիտի կատարեմ, արհամարհելով այդ իմ վսեմ պարտականութեանս առաջ ամէն ինչ»:

Եւ այդ ճշմարիտ եւ ոչ շինծու ու համոզուած բարձր պարտականութեան զգացմունքը՝ դէ-

պի իւր սիրած գործը, սիրելի դարձրեց նրան ինձ:

Ես հաւատացի նրան, հաւատացի միեւնոյն ժամանակ, որ դեռ շատ կան մեր, խառնաշփոթ իսկ, գաղափարական իրականութեան մէջ վաղեմի նուիրուած ու անկեղծ գործիչներ:

Նրանցից՝ Անդրանիկը, Դերմանցի Անդրանիկը իւր խօսքը, իւր վերջին խօսքը կատարեց՝ նա հերոսաբար պատուով մեռաւ:

Յանուն նրա անմոռանալի յիշատակին, թող բոլոր մնացողները հետեւեն նրա օրինակին: Գործի ասպարէզում կամ պատուով մեռնեն կամ պատուով վերադառնան...» (6):

\*\*\*

«Ինկաւ վերջապէս Հէսպէկ լեռներու առիւծը եւ Դերմանի հայութեան պաշտելի Անդրանիկը, հայրենիքի եւ ազատութեան անվերջ մարտիկը, ո՞ւր եւ ինչպէս, բոլորովին անյայտ:

Միայն հեռագիրն է, որ խօսեցաւ «Գաղափար»ի միջոցաւ, թէ ինկած է հերոսական մահով: Ինչ անգութ գնդակ, որ համարձակեցաւ իլլել քսաներեք տարիներու հնչակեան մարտիկը, բախտը այլեւս չի ժպտեր բռնակալութեան գոհ զնացող ժողովուրդին, կը ջոկէ ազնիւ ու անշահախնդիր հերոսները, որք թողելով իւր ընկերները եւ գաղափարակիցները:

Հեռացաւ ինչպէս հեռացեր էին Փարամազներ, Պէնէններ եւ Ազգապաշտաններ, առանց խղճալու իրենց ետեւէն ողբացող հազարաւոր ընկերներ: Իսկական ազատութեան ճանապարհի վրայ օրինակ հանդիսանալու այլասերուած հայութեան:

... Վերջապէս կը հասնէր մեծ օրը՝ ռուս-թրքական պատերազմը: Մլացաւ Կովկաս, մտաւ հայկական 6-րդ գունդը իբրեւ հնչակեան քաջարի մարտիկ, վաշտապետ կարգուեցաւ՝ վայելելով նոյն գունդի զինուորներուն համակրանքը: Ազգայնացի, Պէօյիւքպաշի եւ Չոխուրի պատերազմներուն մէջ մեծ դեր խաղաց նա: Անդրանիկն այնտեղ էր, որտեղ որ միշտ վտանգ կը սպառնար գունդին: ... Երբեք պիտի չմոռնամ այն օրը եւ այն գիշերը, որ Անդրանիկ միայն տասը զինուորներով պատուեց թուրքի շղթան եւ երեք վերստ դէպի ներս՝ Լօլանլի գիւղը գնաց եւ երեսուն մէկ հայեր առնելով վերադարձաւ, ուր վիրաւորուեցաւ միայն մէկ կամաւոր՝

### ՍՈՐԿԻՐ ԻՆՉՊԵՍ ԾԻՇԴ ՈՐՈՇՈՒՄ Կ'ԱՌՆԵՍ

Շարունակում է 16-էն

Նականութիւնները սերտելով, եւ անով հանդերձ զգանք, թէ հանգիստ չենք անոր հետ, պէտք է գիտնանք, որ պակաս բան մը կայ, թէկուզ աներեւոյթ ու թաքնուած կերպարանքով: Հետեւաբար, պէտք է նախազգացումը անտեսել, այլ նաեւ պէտք է որոշուին մասին

### ԴԱՆԴԱՂ ՍՈՐԿՈՂ ԱՇԱԿԵՐՏԸ

Շարունակում է 16-էն

տեղեկութիւններ փոխանցելու գծով ուսուցիչին կրած չարչարանքներու բաժնին մէջ:

\* Ծնողք ինչպէ՞ս կրնան յայտնաբերել այս տիպի աշակերտը.

Դանդաղ սորվող աշակերտը երկար ժամանակ կ'առնէ դասերը հասկնալու, լուծելու եւ ըմբռնելու մէջ: Ան պարզ աշակերտին պահանջած ժամանակին կրկնապատիկ ժամանակին պէտք ունի դաս մը սորվելու համար:

Այս գծով գլխաւոր յատկութիւններն են կեդրոնացման եւ յիշողութեան տկարութիւնը, ինչպէս նաեւ առարկաները զանազանելու եւ անոնց տարբերութիւններն ու նմանութիւնները յայտնաբերելու անկարողութիւնը:

\* Այս հարցով տառապող աշակերտը կրնա՞յ յաջողիլ.

Այո՛, եթէ իր հետ աշխատողի իր իսկական կարողութիւններուն եւ անոնց զարգացման ուղղութեամբ: Եթէ ան քաջալերանք գտնէ հոգեկան գետնի վրայ, ան առիթ պիտի ունենայ ակադեմիական գծով յառաջդիմութիւն արձանագրելու եւ փափաք՝ իր հմտութիւնները զարգացնելու: Կրնանք գինք յետագային տեսնել որոշ ոլորտէ ներս

Ներսէս անունով: Անդրանիկի անակրկալ մահը վիրաւորեց ամբողջ 6-րդ գունդի զինուորներուն սիրտը: Մենք պիտի ողբանք նրա յիշատակը՝ համբույրներ դրկելով նրա թարմ ոսկորներուն: Յարգանք քու յիշատակիդ, անվերջ մարտիկ, եւ յարգանք քո ծնողաց եւ քո ազգիդ, որ ծնաւ քեզ» (7):

\*\*\*\*\*

#### ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆ

- (1) Հայկ Բժշկեանի Նամակը Մոզպետին: Հայաստանի պետ. արխիւ: Կրկնօրինակը Հնչակեան արխիւ:
(2) «Յուշարձան Նուիրուած

անգամ մը եւս խորապէս մտածել, յայտնաբերելու համար անոր ներգացուցիչ բաժինը, եւ երբեմն նոյնիսկ ստիպուած ըլլանք այդ որոշումէն հրաժարելու՝ ներսէն եկող ձայնի մը պատճառով, որ մեզ կը զգուշացնէ անկէ: Սակայն հոս հարկ է նշել, որ կարողութիւնը պէտք է ունենանք լաւապէս զանազանելու նախազգացումը տատամստութենէն:

ստեղծագործութիւն մը կատարած, եթէ այդ մէկը համընկնի անհատական իր ցանկութեան:

\* Ընտանիքին կողմէ հոգեկան աջակցութիւնը անհրաժեշտ է եւ ինչպէ՞ս կարելի կ'ըլլայ.

Այո, դանդաղ սորվելու հարցէն տառապող պատիկին մօտ ընդհանրապէս իր անձին պատկերը մշուշապատ կ'ըլլայ եւ իր կարողութիւններուն հանդէպ վստահութիւնը՝ սահմանափակ:

Հետեւաբար, ան պէտք ունի սէրով եւ գուրգուրանքով շրջապատուելու, եւ զգալու որ ինք ընդունուած է ուրիշներուն կողմէ: Անոր պէտք է վարժեցնել իր հարցերը լաւագոյն ձեւով տնօրինել, իրականութեան հետ հարցորդակցիլ, որպէսզի կարենայ ինքզինք հասկնալ եւ գայն ինչպէս որ է ընդունիլ: Պէտք է անոր սորվեցնել յաջողութեան եւ ձախողութեան միջեւ հաւասարակշռութիւն բանեցնել:

Հարկ է նշել, որ հարցը պէտք է մեծցնել եւ միշտ նկատի ունենալ մասնագէտներու դիմելու հաւանականութիւնը՝ առողջ ախտաճանաչում կատարելու համար, որովհետեւ դանդաղ սորվելու ցուցանիշերը հաւասար կ'ընթանան այլ դժուարութիւններու եւ անկարողութիւններու հետ:

Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Գաղափարաբան Մարտիկի, Մարտի 1930, էջ 262-263, Ա. Թորոսեան «Ընկ. Անդրանիկ Երէցեան»:


(3) «Գաղափար», 1916 Յունիս 29, «Անդրանիկ Երիցեան»:

(4) «Գաղափար», 1916 Յունիս 3, «Հայկական Կեանք»:

(5) Նոյն:

(6) Նոյն, Խչ. Գուրդի «Անդրանիկ Երիցեանի Յիշատակին»:

(7) «Գաղափար», 1916 Յունիս 16, Անդրանիկի զինուորներէն Գրիգոր Թումիկեան, «Անդրանիկ Երիցեան»:



### ՎԱՐԴԳԵՍ ՊԵՏՐՈՍԵԱՆԻ ՎԱՍՏԱԿԸ

Շարունակում էք 14-էն

«Ապրած եւ Չապրած Տարիներ» վիպակը կու գայ ընդլայնելու եւ ամբողջացնելու այդ հոգիներու հաղորդակցութեան տաճարը, իր այլազան դրսեւորումներու ընդմէջէն ընդգրկուած: Զոյգին փոխարէն, երեք սերունդներու-տարեց, միջին եւ երիտասարդ-միջնէն թանձրացող անհասկացողութիւնն է ծաւալող տաճարը հոս: Հաղորդակցութեան պահանջը հոս ալ դրուած է սուր բնոյթով: Անոր առնչութիւն կը յարուցուի այնքան կարեւոր մօտեցումի, հայեցողութեան եւ տեսանկիւնային այլազանութեան բարդութիւնը, դատել եզրակացնելէ առաջ երեւոյթներէն անդին կարենալ թափանցելու անհրաժեշտութիւնը: Չափուած-ձեւուած միակ ճշմարտութեան մը ժխտումն է այս վիպակը, որուն վիճակուած է ապացուցանելու այնքան պարզ այն իրողութիւնը թէ ամէն ինչ յարաբերական է կեանքին եւ արուեստներուն մէջ ալ: Այս պարզ թուացող իրողութիւնը, պէտք է մոռնալ թէ անընդունելի սրբապղծութեան համագոր էր այն օրերուն քարացած խորհրդային իրականութեան մէջ: Վիպակի հարցադրումներուն այս սոսկական շարադրումը պէտք է բնաւ սխալ ենթադրութեան առաջնորդէ: Վիպակը կեանքով թրթռուն, ապրումով սեւեռուած, գործողութեան սուր հանգուցներով բանուած կենսաշարժարձ մըն է, ուր կը ծաւալին, կը տազնապին, կը սիրեն ու կ'ատեն կենդանի նկարագիրներ ուրոյն մտածելակերպով եւ յուզաշարժումով: Բոլորը տրուած՝ Պետրոսեանի առոյգ, խիստ, պատկերաւոր եւ գուրաբար խոստովութեամբ լուսարձակ լեզուով, որ լրագրական կալուածէն ներսուած է ճշգրտութեան ուժականութիւնն ու արագութիւնը առանց բնաւ լրագրական ըլլալու:

«Դեղատուն Անի»-ն եւ «Վերջին Ուսուցիչը» կ'ընդգրկեն տազնապար պատանեկութեան եւ երիտասարդութեան, որոնց լինելիութիւնն ու կողմնորոշումը հիմնական ուշադրութեան արժանացուցած է Պետրոսեան անոր բազմերանգ երեսներով: Նոյն թեմաները սակայն երկու երկերուն մէջ մատուցուած են տարբեր միջավայրի մէջ, այլ կառուցուածքով: «Դեղատուն Անի»-ն ինքնահոս ընթացքով կ'ընթանայ եւ չունի կեղծոնաձիգ հանգուց կամ գլխաւոր տիպար: Մանր, աննշան թուացող խուրձ մըն են գործողութիւններու, որոնք գուրահեղաբար կը հանգուցուին ու կը քակուին երիտասարդական մղումներու անմիջականութեամբ, իւրաքանչիւր հերոսի ներաշխարհին մէջն իսկ: Դարձեալ, նոր մտայնութիւններու, նոր ապրելաձեւ-կենցաղի, ազատութեան նոր ձգտումներու բախումն է, հին, քարացած մտայնութիւններու եւ անհանդուրժողութեան դէմ, դրսեւորուած՝ առօրեայ կենցաղի, վարուելակերպի, մտածելակերպի եւ գգայնութեան նրբերանգներու ընդմէջէն վրձինուած: Այս նոյն հարցադրումները տարբեր ձեւաւորումներով դրուած են եօթը հերոսականարարներուն առջեւ: Իւրաքանչիւրը դիմակալած ու հակազ-

դած է տարբեր ձեւով, ըստ իր խառնուածքին եւ հոգեկան աշխարհի երանգաւորումին:

«Վերջին Ուսուցիչը» վիպակը կրկնելով հանդերձ «Դեղատուն Անի»-ին երիտասարդական տազնապար նոյն թեման, ամբողջութեամբ կը տարբերի իր կառուցով ու մթնոլորտով, ինչպէս նաեւ՝ պատմումի մօտեցումով, ձեւով ու ոճով: Ան կառուցով բարդ գործողութեան երկ է, կեղծոնաձիգ հանգուցով լարուած: Հոս լուսարձակը կը բացուի դպրոցի մը վրայ, ուր ընդունուած նորմերէն դուրս դէպքեր, գործողութիւններ եւ այլ բնոյթի տիպարներ կը ծաւալին, բացայայտելով հին ու նոր մտայնութիւններու իրարու անհամատեղութիւնն ու բախումը: Վիպակը իրաւ տիպարներու մարմնաւորումին առնչութիւն ունի մանկավարժական եւ հոգեբանական նուրբ խոսակցութիւններ, որոնք գիրքը կը դարձնեն հետաքրքրական եւ այժմէական:

«Մենաւոր Ընկուզենին» վէպն է մեռնող հայ գիւղին: Տոհմիկ մթնոլորտ եւ միջավայր ունենալով հանդերձ, ան գիւղագրութիւն կամ գաւառային գրականութիւնն է: Գիւղի մանր աշխարհաձաւային մէջ արդի մարդուն կարգ մը հարցադրումները սեւեռուած են հոն առանց սակայն պատրաստի լուծումներ պարտադրելու: Հայկական լեռնաշխարհն է թատերափայլը ուր մեռնող գիւղի մը ողբերգութիւնը, անոր անցեալն ու ներկան, տիպարներն ու բարքերը կը վիպերգուին քնարական շունչով եւ հոգեբանական նրբութեամբ: Արձակ պոէմ մը՝ ձօնուած լեռնաշխարհի վեհապանձ բնութեան, մեր փլատակ վանքերուն, իսաբարերուն եւ առասպելներու վսեմ խորհուրդին: Այս ամէնը՝ սեւեռուած իրապաշտ մօտեցումով, մատուցուած անսթեբեթ եւ ժուժկալ լեզուով, ուր գալուած գգացականութիւնը կ'օժտէ պատմումը շեշտուած թեյադրական ներուժով: Ճակատագիրներու եւ դէպքերու լարուածութիւնն ու հոգեբանական հանգուցներուն նրբին խուզարկումները վէպին կ'ընձեռեն արդիականութեան հանդերձանքը: Ձեւի եւ բովանդակութեան միաձուլում-ընդելուզում մը ակնյայտ է հոս: Երկուքին ներթափանցողութիւնն ու ներազդեցողութիւնը կը ստեղծեն մթնոլորտ մը հոգեկան վերասլացութեան, ուր իրականութիւնը կը թուի երազ, իսկ երազայինը՝ իրականութիւն: Զգացէ՛ք այդ այլափոխումը:

«Հեռու, բարձունքի վրայ մենաւոր գանգակատունն էր, եւ թուաց Մարիամը կը գնալ-ը գնայ, կը հասնի գանգակատան, եւ նրանք կը կանգնեն կողք-կողքի, երկու բարակիւրան աղջիկ՝ մէկը սեւ տուֆ հագած, միւսը՝ սպիտակ մետաքս»:

Վէպին ժամանակի հատուածները, որոնք կ'ընդգրկեն հեռաւոր անցեալը, անմիջական ներկան ու գալիք ապագան, ժամանակագրական անջատ միաւորներ չեն, ոչ ալ՝ կարգապահ յաջորդականութիւններ: Գիւղին միակ ժամանակը գիւղին կեանքն է՝ հինը ներկային մէջ ընդելուզուած, ու ներկան ապագայով վտանգուած: Ան իր

բոլոր հիւսուածքներով ներկայ է հերոսներուն ներաշխարհին, յուշերուն եւ ապրումներուն մէջ: Յուշը կ'ապրուի որպէս ներկայ, մինչ ներկան կը տազնապար ապագայի հարցադրումով: Գիրքին բազմաձայնութիւնը տիպարներու այլազանութիւնն է միայն: Անոնք պիտի մնային սոսկական նկարագիրներ պատահականօրէն իրարու քով բերուած, եթէ իւրաքանչիւրին ձայնը, ներքին բնաշխարհը, սեփական փոքր-տիեզերքը իր ճակատագրով չգար միանալու, ամբողջացնելու, բացայայտելու մեծ տիեզերքը որ այս պարագային մեռնող գիւղն է:

«Մենաւոր Ընկուզենին» կը գատորոշուի Վարդգէս Պետրոսեանի միւս գործերէն: Մինչ միւս երկերը կը տարագուին մէկ բնորոշումով՝ տինամիք ուժական իրապաշտութեամբ, ուր գրողը կողքին միշտ ներկայ է լրագրողը, արագութեան եւ նորութեան իր ձգտումներով եւ անպայման ցնցել-արթնցնելու միտումով, «Մենաւոր Ընկուզենին» չի պարփակուի այդ միակ տարագումին տակ: Ան բազմաձեւ, բազմասեռ վէպ է, այն իմաստով որ հոն հաւասար ուժգնութեամբ կը գտնենք պարզ իրապաշտութեան մը կիրարկումը թեւաւոր քնարականութեան մը կողքին, ողբերգութեան մը ճակատագրականութիւնը դիւցազնապատմի մը վերասլացին հետ, աւանդալէպի մը հրաշալիքը ազգագրական ճշգրտութեան մը քով, եւ այս բոլորը՝ վէպի հիւսուածքին ու կառուցուածքին մէջ՝ ներդաշնակօրէն ներհիւսուած:

Զարմանալի գուզադիպութեամբ մը Պետրոսեանի վերջին վէպը, «Կրակէ Շապիկ»-ը հանրագումարն է իր նախորդ գործերուն, տեսակ մը համադրութիւնը անոնց բոլոր հակա հարցադրումներուն, երկրորդական շրջագծումներով՝ նոր տազնապարհադրումի մը ծիրին մէջ ծաւալած: Այսպէս՝ դարձեալ կ'արծարծուին երիտասարդութեան տազնապարհ, մեռնող հայ գիւղին, սերունդներու միջեւ հաղորդակցութեան եւ ընկերաքաղաքային վարչամեքենային մարդկայնացման եւ բարելավման բացարձակ ճշմարտութեան մատչելու ձգտումն ու ճիգն է՝ երկու ուղիներով ընթացող, անհատական եւ հաւաքական բնութագրումներով:

Անհատականը գրող-խմբագիր Վարուժան Շիրակեանի ապրումներն ու խոհերն են, անոր ներաշխարհային խռովքն ու ծաւալումը ընդգրկող: Անհանգիստ նկարագիր մը՝ որ ամէն բան ունենալով հանդերձ, դժգոհ է ինքնիրմէն ու կեանքէն, ապրած ու չապրած օրերու անբաւարարութենէն, շրջապատին անձնասէր եւ գձուձ վերաբերմունքէն: Դժգոհութեան նորա-

ձեւ քմայք մը չէ իրենինը, այլ կեանքն ու մարդիկը դէպի լաւը այլափոխուած տեսնելու իր տենչանքին անբաւարար արդիւնքն է ան, մարդոց միջեւ հաղորդակցութիւնն եւ ներդաշնակութիւնն ստեղծելու ջերմ փափաքն է գապանակը այդ դժգոհութեան:

Վարդգէս Պետրոսեան յաջողած է մեզի փոխանցել գրող մարդու այդ տազնապար իր բազմակողմանի երեսներով եւ բարդ խորութեամբ: Հոգեբանական պահերն ու ապրումները ծաւալած է ոչ ընդունուած պարագայական հեշտ ուղիներով, այլ նորութեան եւ խիզախութեան դժուարին եւ փորձանաւոր ուղիներով:

Հաւաքական ուղիին ձայնատարն է Արամ Շիրակեան, որուն ճշմարտութեան մատչելու ճիգը ամբողջութեամբ բեւեռուած է Մեծ Եղեռնի տակաւ գոյատեւող անդրադարձներուն վրայ: Ան կը փորձէ առարկայականօրէն բացատրել եւ ըմբռնել պատահածը, նոյնիսկ՝ միւս կողմին ալ հայեցողութեան ու մօտեցումին ուշադրութիւն ընծայելով: Իր նպատակն է վերլուծել, ելք մը գտնել դուրս գալու համար հոգեկան այն գեհնէնն ու անելէն, որուն ցանցապատմին մէջ կը գալարուի արդի հայ մարդուն ենթագիտակցութիւնը: Ի վերջոյ կը յանգի այն եզրակացութեան, թէ ոչ կամ կանուխ, ելքը թուրքին հետ երկխօսութիւնն է: Հասկնալ-հասկցուիլն է: Առաջին փորձ մըն ալ կը ձեռնարկէ ան թուրք լրագրողի մը հետ, որ սակայն կը մնայ առանց անմիջական արդիւնքի:

«Կրակէ Շապիկ»-ին մէջ առկայ է նաեւ մեր Սփիւռքը իր բարդ այլազանիւթիւններով, գգոլտուքներով, կարօտներով, սէրերով ու քէներով: Սեւ ու ճերմակով: Դժբախտաբար այդ Սփիւռքը սեւեռուած է ծրագրային մակերեսութեամբ, եւ իր տիպարները ապրող հակներ ըլլալու փոխարէն, պարզ պատգամախօսներ եւ ձայնատարներ կը մնան, առանց համոզիչ ըլլալու:

Խնդրայարոց, բարդ հիւսուածք ունեցող ընկերային վէպ մըն է «Կրակէ Շապիկ»-ը, ուր սակայն չոր ու ցամաք ձեւով ընդհանրապէս հարցեր չեն որ կը վերլուծուին եւ ոչ ալ կը յանգին դիւրին եզրակացութիւններու: Կեանքի բաբախիւնը կը գգանք հոն: Իրաւ ապրումներու, գգացական խոր պնդումներու եւ խուզարկումներու խոհական բարիքներով ալ օժտուած գործ մը՝ վերջապէս, որ, դժբախտաբար, Վարդգէսի վաղաժամ ու դժնդակ մահով, իր լրումին չհասաւ նոր ստեղծագործութիւններու կարելիութեամբ: Բայց տրուածն ալ, անպայման որ կը հարստացնէ մեր արձակի անդատանը: Ու իր գրական դիմանկարը կը մնայ միշտ պայծառ:

**OFFICES FOR RENT IN PASADENA**

**ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ**

1060 North Allen Ave  
Pasadena, CA 91104

Գրասենեակները վերանորոգուած  
եւ յարմար վարձքերով  
Յետաքրքրուողներէն հեռաձայնել՝  
(626) 398-0506

**ՅԱՒԱԿՅՈՒԹԻՒՆ**

**ՎԱՐԴԳԷՍ ԿԻՐԱԿՈՍԵԱՆԻ** մահուան տխուր առիթով **Տէր եւ Տիկ. Ռաֆֆի եւ Սիրվա Եփրեմեան** իրենց խորագրաց ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի ընտանեկան պարագաներուն եւ հարազատներուն:  
Առ այդ \$100 կը նուիրեն «Մասիս»ի ֆոնտին:

**ՅԱՒԱԿՅՈՒԹԻՒՆ**

**ՎԱՐԴԳԷՍ ԿԻՐԱԿՈՍԵԱՆԻ** մահուան տխուր առիթով **Տէր եւ Տիկ. Ռաֆֆի եւ ձէսիքա Կիրակոսեան** իրենց խորագրաց ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի ընտանեկան պարագաներուն եւ հարազատներուն:  
Առ այդ \$100 կը նուիրեն «Մասիս»ի ֆոնտին:

**ՍՈՒՐԲ ԾՆՆԴԵԱՆ ՏՕՆԸ ՍՐԲՈՑ ԴԵՒՈՆԴԵԱՆՑ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻՆ ՄԷՋ**

Շարունակուած էջ 7-էն

ւորի աշխարհի մարդկանց հետ: Որովհետեւ եթէ բացակայ է Աստուած մեր կեանքին մէջ, ապա մեր կեանքը նման է խոտին, որ կ'աճի, հասակ կ'առնէ, բայց շօշափելի ո'չ մէկ արդիւնք կ'արձանագրէ:

Յիսուսի Մնուները սոնախմբել կը նշանակէ կեանքը սոնախմբել, գեղեցկացնել Աստուածապարգեւ մեր կեանքը բարոյական սկզբունքներով, Քրիստոսի կեանքին օրինակովը: Քրիստոս մարդկութեան առջեւ բացուած կեանքի գիրքն է, որուն էջերուն մէջ արձանագրուած են ճշմարտութեան դասեր: Այս տարի այնտեղ արմատ նետած կեանքի դասերէն մէկը դարձուցած ենք մեր թեմի տարուան նշանաբանը. «Հայ Քրիստոնեայ ընտանիքը՝ բարոյական մեծագոյն յաղթանակն է»: Ահաւասիկ այս տեսիլքով կը սկսինք 2013 թուականը, որ նոր մարտահրաշխանք կը կարգաւ բուրդիս անխախտ, կեանքն ապրելու քրիստոնէական հաւատքի եւ աստուածային գերագոյն իմաստութեամբ, որպէսզի Աստուծոյ ստեղծագործութեան մէջ մաս ու բաժին բերելու առանձնաշնորհումը չկորսնցնենք»:

Արարողութեան աւարտին հաւատացեալներ մի առ մի մօտենալով համբուրփեցին Սրբազան Հօր ձեռաց խաչը, շնորհաւորեցին իր

եւ հոգեւորականներուն Նոր Տարին եւ Սուրբ Մնուները: Սրբազան Հօր կողմէ իւրաքանչիւր ընտանիքին բաժնուցեալ գեղեցիկ ծրարով պատրաստուած նուէր մը:

Հոգեւորականներ եւ հաւատացեալներ առաջնորդուեցան դէպի Թրքմենեան Հրապարակ, ուր ուրախ եւ եւ գուարթ մթնոլորտի մէջ պարելով ճուարճացան: Ապա ուղղուեցան դէպի Առաջնորդարանի «Փոլ Եղբայրներ Կայերիա» եւ ապա դէպի Նազարէթ եւ Սիմա Գալայճեան Սրահ, ուր տեղի ունեցաւ Սուրբ Մնուներէն Ընդունելութիւնը: Ներկաները միասնաբար հաճելի ժամեր ունեցան: Սրբազան Հայրն ու հոգեւորականները ողջունեցին զիրենք եւ սիրալիք գրոյց ունեցան: «Անուշ Պարային Համոյթ»ի փոքրիկները Անուշ Մարգարեանի ղեկավարութեամբ իրենց հեղաճկուն պարերով խանդավառութիւն ստեղծեցին եւ արժանացան բարձր գնահատութեան: Սրբազան Հայրը այցելեց իւրաքանչիւր սեղան եւ իր շնորհաւորութիւնները փոխանցեց հիւրերուն:

Հիւրասիրութեան պատրաստութեան աշխատանքները կատարեց Առաջնորդարանի Տիկնանց Օժանդակ Մարմինը՝ Ատենապետութեամբ Տիկին Սինտի Նորեանի: Իսկ նուէրներու գեղեցիկ ծրարները նուիրուած էին Տէր եւ Տիկին Ժիրայր եւ Արսինէ Սէրայտարեանի կողմէ:

**ՓԱՍՏԻՆԱՅԻ ՀԱՄԱԳԱՂՈՒԹԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ**

Շարունակուած էջ 7-էն

ներկայացնեն Համագաղութային Մարմնի գրասենեակը հետեւեալ հասցեով.

2390 Cooley Place  
Pasaden, CA 91104  
Հեռախօս՝ (626) 399-1799  
Pacoalition@gmail.com

Գործերու ներկայացման վերջին պայմանաժամն է 2013 թուականի փետրուարի 28ը:

Մեր բոլոր գործող կազմակերպութիւններէն կը խնդրենք որ մասնակցին յուշարձանի կառուցման այս ծրագրին, իրականացնելու համար պատմական կոթողի իրագործումը: Զգուշանալու է այն մարդոց մէջ, որոնք խարդախութիւններով եւ անձնական շահեր հետապնդելով կը խոչընդոտեն մեր ջանքերն ու ազգանպաստ գործը:

Կանխայայտ շնորհակալութիւններ ձեր ջանքերուն եւ մասնակցութեան համար:

ՓԱՍՏԻՆԱՅԻ ՀԱՄԱԳԱՂՈՒԹԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ

**Ձեր Ծանուցումները Վստահեցէ՛ք «Մասիս» Շարաթաթերթին**  
T: (626) 797-7680 F: (626) 797-6863  
Massis2@earthlink.net

**ԱՐԺԱՆԻ ԳՆԱՀԱՏԱՆՔ ՏԻԿԻՆ ԺԵՐՄԻՆ ՏԵՄԻՐԱԼԻՆ**

Շարունակուած էջ 8-էն

ընթերցումը: Վեհափառը բարձր գնահատելով տիկին Ժէրմին Տէմիրալի տասնամեակներ շարունակ Ս. Պետրոս Հայց. Առաք. Եկեղեցւոյ եւ Տիկնանց Միութեան մատուցած անձնուէր ծառայութիւնները՝ առաջնորդ Յովնան Արք.ի միջնորդութեամբ, զինք կը պարգեւատրէր Ս. Ներսէս Շնորհալի շքանշանով:

բուխ բարեմաղթութիւնները, միաժամանակ տուին չիշատակի նուէրներ:

Գնահատանիքի յատուկ խօսքով հանդէս եկաւ Ս. Պետրոս Եկեղեցւոյ հոգեւոր հովիւ, արժ. Տ. Շնորհք Աւգ. Քհնյ. Տէմիրճեան: Ինք եւս բարձր գնահատեց յոբելեար Տիկ. Ժէրմին Տէմիրալի տասնեակ տարիներու ծառայասիրութիւնը, նախաձեռնութեան ոգին եւ պարտաճանաչ տիպար



Առաջնորդ Յովնան Սրբազան այս առիթու խօսք առնելով բարձր գնահատեց տիկ. Ժէրմին Տէմիրալի անձնուէր ծառայութիւնները, թէ Ս. Պետրոս Եկեղեցւոյ եւ թէ առաջնորդարանի Տիկնանց Միութիւններուն, արժանանալով իր գործակիցներու անվերապահ սիրոյն եւ գործնական աջակցութեան:

վարչականի նկարագրի բարձր յատկանիշները: Արդարեւ, իր դեկավարած կազմակերպութիւնն էր որ՝ անցած տարիներու ընթացքին, եկեղեցւոյ բարգաւաճման համար, հանգանակած էր շուրջ մէկ միլիոն տոլար:

Արարողութեանց աւարտին եկեղեցւոյ Գարակէօգեան սրահին մէջ, տեղի ունեցաւ հիւրասիրութիւն-ճաշկերոյթ մը, ի պատիւ օրուան մեծարեալին: Շուրջ 200 ներկաներուն մէջ կը տեսնուէին թեմին Առաջնորդ Գերշ. Յովնան Արք. Տէրտէրեան, նախկին առաջնորդ՝ Գերշ. Տ. Վաչէ Արք. Յովսէփեան, Լոս Անճելլոսի քաղաքապետական Խորհուրդի անդամ՝ էրիք Կարսեթի, եկեղեցւոյ հովիւ՝ արժ. Տ. Շնորհք Աւգ. Քհնյ. Տէմիրճեան, ինչպէս նաեւ Միական Խորհուրդի, Տիկնանց Միութեան, Պոլսահայ Միութեան, Հայ մամուլի եւ այլ կազմակերպութեանց ներկայացուցիչներ:

Գեղարուեստական յայտագրին իր մասնակցութիւնը բերաւ՝ սոփրանօ Անահիտ Զադոյեան: Շնորհալի երգուչին Կոմիտաս Քէշիշեանի դաշնակի ընկերակցութեամբ երգեց «Տէր Կեցո», «Կու Գանք Հայաստան» եւ «Քանի վուր ջան իմ» երգերը:

Ամանորեան գարդերով գարդարուած սրահէն ներս կը տիրէր տօնական մթնոլորտ «սիրոյ սեղան»ներուն շուրջ:

Հանդիսութեան աւարտին ելոյթ ունեցաւ տիկ. Ժէրմին Տէմիրալ: Ան իր շնորհակալութիւնները յայտնեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսին, Ս. Ներսէս Շնորհալի շքանշանով պարգեւատրելուն համար, ինչպէս նաեւ Արեւմտեան թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեանին, Տ. Շնորհք Աւգ. Քհնյ. Տէմիրճեանին, Միական Խորհուրդին, Տիկնանց Միութեան եւ բոլոր անոնց, որոնք իրենց մասնակցութիւնը բերին օրուան հանդիսութեան:

Օրուան հանդիսավար՝ Յակոբ Մերունեանի ողջոյնի ջերմ խօսքերէն ետք սեղաններուն օրհնութիւնը կատարեց թեմի նախկին առաջնորդ՝ Գեր. Տ. Վաչէ Արք. Յովսէփեան:

Իր փակման խօսքին մէջ առաջնորդ Յովնան Սրբազան ըսաւ. «Յաղթական եւ տօնական օր մը եղաւ այսօր, թէ Ս. Պետրոս Եկեղեցւոյ եւ թէ Արեւմտեան թեմին համար»: Այնուհետեւ դրուատեց մեծարեալ տիկ. Ժէրմին Տէմիրալի նկարագրի բարեմասնութիւնները՝ ծառայասիրութիւնն ու սէրը, որ դարձուցած է իր կեանքի նպատակը: Սէրը՝ առ Աստուած, սէրը՝ իր եկեղեցիին եւ սէրը՝ դէպի մայր Աթոռ Ս. Էջմիածին: «Այս սրբատառ կոնդակը՝ Ձեզ աւելի պիտի գորացնէ շարունակելու համար ձեր աստուածահաճոյ աշխատանքները, ի սպաս ձեր գաւակներուն, թոռներուն եւ ժողովուրդին»:

Ճաշկերոյթի աւարտին գործադրուեցաւ պատշաճ յայտագիր մը: Տիկին Ժէրմին Տէմիրալի կենսագրականը կարգաց իր որդին՝ դոկտ. Արի Տէմիրալը: Ան ներկայացուց իր մօր կեանքի երեք հանգրուանները՝ Տիգրանակերտ, Պոլիս եւ ապա Գալիֆորնիա:

«Պահպանիչ» աղօթքով վերջ գտաւ պաշտօնական հանդիսութիւնը, որմէ ետք Տիկ. Ժէրմին սկսաւ մէկ առ մէկ ընդունիլ ներկայ հասարակութեան սրտաբուխ եւ ջերմ շնորհաւորութիւնները:

Պատիւս արժանաւորաց:

### ՄԵՆԱԻՈՐ ԳՐԱԳԻՏՈՒՅԻՆ

Շարունակում է 15-ԷՃ

Երբեմն ալ հիւրասենեակը կը նստէինք կողք կողքի շարժուն փոքր սեղանին վրայ սուրճի գաւաթները դրած:

Ինք նոր սկսած էր «Աշնան Տերեւներ» գիրքը գրելու: Մաս առ մաս կը կարդար, սուրճը ումպ ումպ խմելով ու կարդացած էջերուն մասին կարծիք կը փոխանակէինք: Գուտսին կը սիրէր գաղափարի փոխանակումը բաց կը սիրէր որ դիմացինը համոզուէր նաեւ ի՛ր իսկ կարծիքի ճշգրտութեան:

«Աշնան Տերեւներ» հատորը Հայաստան տպելու երազը կը փայփայէր: Յետագային իրագործեց այդ «Աշնան Տերեւներ» ը գիրքը տպեց երեւան: Գիրքին գինեձօնին խօսեցաւ Ե. Ազատեան եւ ես:

«Աշնան Տերեւներ»-ը գինեձօնի արժանացաւ նաեւ Լոս Անճելըս, Գ. Շէնեանի «Նոր Կեանք» շաբաթաթերթի նախաձեռնութեամբ:

Զգայուն էր Գուտսին եւ իրապաշտ կեանքի մէջ:

Բաժնուած էր ամուսինէն բաց «Ապարգահան»-ի չէր դիմած: «Մեր գաւակներուն հարսանիքին որպէս ծնողք, հայր-մայր միասին ներկայ պէտք է ըլլանք» ըսաւ մտերմիկ օր մը:

Որքան իրաւունք ունէր:

Աշխարհ այնքան լեցուն է անբոյն որբերով «Ապարգահան»-ի պատճառաւ:

Տէր եւ Տիկ. Միքայէլեանները հիմնադիրներէն եղած էին Ֆիլատէլֆիոյ Թէքէեան Մշակութային Միութեան: Գուտսինի ղեկակին ներքնայարկը բաւական լայնատարած սրահ մը կար որ երկար ատեն ծառայած էր Թէքէեան Մշակութային միութեան հաւաքներուն:

Ներքնայարկի այդ սրահին մէջ հիմա իրար վրայ տրցակներով դիզուած կը մնային Գուտսինի անգլերէն գրած թատերգութիւնը «cave men cave women»:

Դառնացած էր որ գիրքը տարածելու համար որեւէ Զանք չէր թափած հայկական շրջանակը: Գիրքէն օրինակ մը նուիրեց ինծի: Ե՛ս, երեք օրինակ եւս խնդրեցի:

Հայ Արաբ Մշակոյթի փոխյարաբերութեան աշխատանքիս բեղուն շրջանն էր հայէպի մէջ: Սուրիական Մշակոյթի Նախարարութիւնը խորապէս կը գնահատէր Հայ Արաբ մշակոյթներու փոխյարաբերութեան գծով Ն. Խալիլի հետ գործակցութիւնն:

Մեր ներկայացուցած որոշ թիւով գիրքեր Սերօ Խանգատեան, Վ. Պետրոսեան եւ այլք նախարարութեան կողմէ հազարներով հրատարակուեցան, ղրկուեցան բոլոր Արաբական երկիրները: Այդ շրջանին Պետական Մշակութային կեդրոնէն ներս, գործակցութեամբ Հայ Կաթողիկէ Միութեան, կը ներկայացնէի դասական եւ ժամանակակից հայերէնի եւ սփիւռքահայ գրողներ, արաբերէնի թարգմանութեամբ Նիզար Խալիլի կողմէ:

Ա. Իսահակեան, Գ. Զոհրապ, Զ. Տոլապճեան, Վ. Պետրոսեան եւ այլք: Դ. Վարուժան, Ե. Չարենց, Թարգմանութեամբ Ն. Նազարեանի եւ այլք:

Գուտսին գիրքը անգլերէն էր: Այդ գիրքը երկար, երկար մտածեցի փոշիներու մէջ խեղդուած անգլիատառ «Cave men cave women» թատերգութեան շունջ տալու մասին, Հայկական վերադարձիս: Եղած էի շրջուն մշակութային գործիչ, Հայաստանի, Գանատայի եւ Ամերիկայի միջեւ:

«Անաւարտ Միրանուագ» պատմութեան հատոր (լոյս տեսած Երեւան) Նիզար Խալիլի թարգմանութեամբ, հրատարակուած էր Սուրիական Մշակոյթի նախարարութեան կողմէ «Մէր եւ Մէր» խորագրով: Դարձեալ Նիզար Խալիլի թարգմանութեամբ, Մանկապատանեկան «Կարմիր հեծանիւր» հատորիկը նկարագրուած Ալիք Անտոնեանի կողմէ լոյս տեսաւ Թլաս տպարանէն: Թլաս տպարանէն լոյս տեսաւ նաեւ արաբերէն լեզուով «Տուլայտող հոգիներ» խորագրով պատմութեան հատորը Նիզար Խալիլի թարգմանութեամբ:

Գուտսին սրտանց կը գնահատէր հայ-արաբ մշակոյթի ի նպաստ տարուած աշխատանքը եւ սրտանց ուրախացաւ նաեւ անունս տպուած տեսնելով գերմանիա տպուած «Սուրիացի կին գրողներ» հատընտիրին մէջ եւ երբ իրագեկ եղաւ որ արդէն հայ կին գրողներէն Լուսիկ Մելիքեանի, Հիլտա Գալֆայեանի, Ալիսիա Կիրակոսեանի, Մարո Մարգարեանի գործերէն Խալիլի թարգմանած է արդէն: Ուրախացաւ: Ծափեց:

«Հերթը քոնն է» ըսի մտովի: Հայկական հրատարակած էի 1997-ին պատանեկան «Փոքրիկ Հերոսներ» գիրքս նկարագրաբարուած Վրէժ Քասունիի կողմէ: Եւ «Մեղուն եւ Թիթեռնիկը» մանկական գրքով մը արաբերէնի թարգմանութեամբ Շիրազ Անատանիի կողմէ յանձնած էի տպարան Թլաս:

Մանկապատանեկան «Սպիտակ Իշխանուհին» հատորիկս արժանացաւ Մոնրէալի համալսարանի ուշադրութեան, հրատարակուեցաւ գունագարգուած նկարներով, «Մոնրէալի համալսարանի» կողմէ եւ պարգեւատրուեցաւ 1998-ին: Ֆիլատէլֆիո կեցութեանս ընթացքին Մանկական գոյգ գիրքերս արժանացան գնահատանքի: Մոնրէալ գիրքերուն մասին խօսեցան, մտաւորական Նուրհան Ուզունեան, Մարիա Ֆօլքս եւ Դոկտ. Խ. Թէմիզեան: Լոս Անճելըս, գոյգ գիրքերուն վերլուծումով հանդէս եկաւ ներհուն մտաւորական Վաչէ Սէմէրճեան: Իսկ Ֆիլատէլֆիո տպաւորիչ գեկուցումով Փրօֆ. Օշին Քէշիշեան եւ Գ. Միքայէլեան:

Անգամակցած էի արդէն Ամերիկացի Philadelphia «Writers Conference»-ին:

Անգլիագիր հայ գրողներու գործերէն նմոյշներ եւ հայ գրականութեան տաղանդներէն պա-

տուիկներ ներկայացուցի Միութեան հաւաքներուն: Յաջորդ ընտրութիւններուն BOARD - ի անդամ ընտրուեցայ:

-Կեդրոնացի՛ր, խնայ՛է դուն քեզի, շատ կը վազվզես, շատ կը տարածուիս-, կ'ըսէր Գուտսին: Իրաւ է՛ր:

Այլապէս առանց այդ խանդու եռանդին ի՞նչպէս Գուտսին անգլերէն գիրքը պիտի կարենայի թարգմանել տալ արաբերէնի: Եւ գոյգ լեզուներու քաջ տեղեակ Դոկտ. Շավքաթ Եուսէֆէն խնդրել որ ինք յանձն առնէ Գուտսինի թատերգութեան թարգմանութիւնը: Հետեւողականօրէն հետապնդել Սուրիական Մշակոյթի Նախարարութեան մօտ որպէսզի «Cave men cave women»-ը արժանաւորապէս տեղ գրաւէր Սուրիական Մշակոյթի Նախարարութեան «Համաշխարհային Թատերգութիւն» մատենաշարի յայտագրին մէջ ու տարածուէր Արաբական բոլոր երկիրները: Գիրքին առաջին էջին Գուտսինի կենսագրական ստորագրելու գոհունակութիւնը ինծի տրուեցաւ Զ՞է որ ծնունդով սուրիացի էր Գուտսին:

Արաբերէնի թարգմանութեամբ եւ Արաբական Մշակոյթի նախարարութեան կողմէ հրատարակուած «Cave men cave women» (Արաբերէն վերնագիրը յիշել) գիրքին սերտողութիւնը ներկայացնելու համար հրաւիրուեցաւ արաբ գրականութեան Սուրիացի լաւագոյն թատերագիրներէն Ուալիտ Ըիլասին: Հանդիսութիւնը տեղի ունեցաւ արաբական պետական Մշակոյթի կեդրոնի մէջ: Խօսեցայ նաեւ ես ներկայացնելով նախկին Հայկական Գրագիտուհի Գուտսին Միքայէլեանը եւ իր մայրենի լեզուով մշակած գրականութիւնը:

Աւարտին գիրքէն նուէր տրուեցաւ ներկայ գրասէր հասարակութեան:

Հայ գրականութեամբ հետաքրքրուող արաբ գրչակիցներ «Պարոյր Սեւակ»-ի անուն գրական սալօնին մէջ ի մի գալով մտքի փոխակախումներ ունեցան, «cave men cave women» թատերգութեան հեղինակի արտայատած, իմացական իմաստասիրական գաղափարներու մասին:

Յուզումնախառն հրճուանք

ապրեցաւ Գուտսին այս բոլորը իմանալով: Ես ա՛լ ուրախ էի իր հրճուանքով:

Թէքէեան Մշակութային Միութեան կազմակերպած ձեռնարկներուն Գուտսին հետ միասնաբար կը մասնակցէինք: Միութեան հրաւերով Ֆիլատէլֆիո ժամանած գրողները պատշաճօրէն ներկայացնելու, միասին էինք միշտ, Վ. Թեքեանի, Արտեմ Յարութիւնեանի, Զարեհ Խրախունիի եւ այլոց: Սիլվա Կապուտիկեանի մեծարանքին երկուսով բեմ բարձրացանք արժեւորելու «Ամենայն Հայոց Տիկին»-ը:

Մօտաւորապէս տաս տարուայ մէջ, ընդհատումներով մասնակից եղայ Գուտսինի առանձնութեան: Եւ այդ առանձնութեան մտերմութիւնը սիրտ ջերմացնող վայելքի աղբիւր էր երկուստեք:


Մենաւոր գրագիտուհին Գուտսին Պասմաճեան Միքայէլեան գիտէր իր մենաստանին առանձնութիւնը գունաւորել այլազան մանրիկ հաճոյքներով: Լուր ապակիէ սենեակ մը ունէր ուր հունտերը կը ցանէր կաւամաներու մէջ: Կ'ուրախանար երբ շիւղերը գլուխ ցցէին: Շրջան մը հոգ տանելէ ետքը արմատ նետած մասը կը տեղաւորէր պարտէզի կարմիր հողին գիրկը: Գրողի իր գգայուն հոգին իւրաքանչիւր ծիլի կոկոնի ծաղկումին կ'սպասէր: Իւրաքանչիւր կոկոնին վարդը կ'երագէր ու կը գրէր . . . կը գրէր:

Ահա թէ ի՞նչու այդքան խնամուած եւ գունաւոր էր պարտէզը եւ գունաւոր է նաեւ մենաւորի ի՛ր կեանքը լի կարմրաւուն լոլիկներու ողկոյցներով, թարմ վարունակի թաւապատ կանաչով ու կերակրած տեսակաւոր թռչնակներու ճուղղումներով, գեղգեղումներով ու հազար ու մէկ ծաղիկներու, ալ վարդի ու մանուշակի բոյրով:

Ահա թէ ի՞նչու բլրակի վրայ մենաւոր կանգնած երկյարկանի դղեակին մէջ իմաստալից է մենաւոր գրագիտուհին կեանքը ու շրջապատը միշտ դալար: Դալար է նաեւ ի՛ր սիրտը, հոգին, անկեղծ մտերմութեամբ իր բարալիկ մշտադալար գրիչին որ այնքան զգայուն եւ նոյնքան ալ առնական է:

**VA Print Media**  
 Book Printing • Hard Covers • Year Books  
 Restoration of Old Books & Bibles

Նոր Գիրքերու Տպագրութեան եւ Հին Գիրքերու Նորոգութեան Համար Հեռաձայնէ՛ք ՎԱՀԻ ԱՁԱՊԱՀԵԱՆԻՆ



**Vahe Atchabahian**  
 1870 E. Layton St. • Pasadena, CA 91104  
 626-354-5924 • vamedia@yahoo.com



**Save Support Sustain**

Syrian Armenian Relief Fund  
 P. O. Box 1948  
 Glendale, CA 91209-1948

www.syrianarmenianreliefund.org